# Մասիս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 17 (1767) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 7, 2016
VOLUME 36, NO. 17 (1767) SATURDAY, MAY 7, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Սահմանի Վրայ Կը Նկատուին Ատրպէյճանական Բանակի Կուտակումներ Ու Տեղաշարժեր



Հայկական զօրքերը կը հսկեն Ատրպէյճանի հետ սահմանը

Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան Բանակի աղբիւրները յայտնեցին, որ հայկական զօրամասերը կը հետեւին ատրպէյճանական բանակին կողմէ առնուող քայլերուն եւ անհրաժեշտութեան պարագային պատրաստ են դիմելու համապատասխան միջոցներու:

Միւս կողմէ, Հայաստանի պաշտպանութեան նախարարի խօսնակ Արծրուն Յովհաննիսեան տեղեկացուց, որ Ղարաբաղեան ճակատներու վրայ այժմ հակառակորդի կուտակած զօրքերու թիւը աւելի մեծ է, քան ապրիլեան պատերազմի ժամանակ:

«Իրավիճակը նախորդի նման չէ. բաւականին աւելի մեծ զօրախումբերու շարժի մասին է խօսքը: Հետախուզութիւնն ամէն ինչ տեսնում եւ լսում է», «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնեց Յովհաննիսեան:

Պաշտպանութեան նախարարի խօսնակը վստահեցուց, որ հայկական զինուած ուժերու հետախուզութիւնը ուշադիր կը հետեւի Ատրպէյճանի զօրքերու տեղաշարժերուն:

Ապրիլեան պատերազմէն յետոյ հետախուզութեան հասցէին քննադատութիւններ հնչեցին, սակայն, Յովհաննիսեանի խօսքով, այդ օրերուն բազմաթիւ դրուագներ եղած են, երբ հետախուզութեան լաւ աշխատանքի շնորհիւ հակառակորդի շատ գործողութիւններ կասեցուած են:

Այս պահուն եւս, Յովհաննիսեանի փոխանցմամբ, ղարաբաղեան առաջին գիծերուն վրայ ուժեղացուած հսկողութիւն կ՚իրականացուի եւ բանակին կ՚օգնեն նաեւ կամաւորականները:

Անդրադառնալով նաեւ 80 ականներու զէնքի մասին Նախագահի աղմկոտ յայտարարութեան, Յովհաննիսեան ըսաւ, որ աշխարհի ամենալաւ զէնքը նոյնինքն 80-ականներու զէնքն է:

## Թուրքիա Զգուշացուցած է Գերմանիոյ Խորհրդարանին՝ Չօգտագործել Ցեղասպանութիւն Բառը

Թուրքիոյ Պունտեսթակը (Խորհրդարանի) նախազգուշացուցած է Օսմանեան կայսրութեան կողմէ հայերու ջարդերուն վերաբերող բանաձեւին մէջ չօգտագործել ցեղասպանութիւն բառը: Այս մասին արտայայտուած է Գերմանիոյ մէջ Թուրքիոյ դեսպան Հուսէյն Աւնի Քարսլըօղլուն:

«Այս հարցը ազգային խորհրդարանի որոշելիքը բանը չէ: Պատմութեան գնահատականներ տալը Պունտեսթագի առաջադրանքը չէ»,- ըսած է դեսպանը եւ զգուշացուցած, որ բանաձեւին մէջ ցեղասպանութիւն եզրը օգտագործելը կրնայ վտանգի տակ դնել հայ-թրքական յարաբերութիւններու հետագայ կարգաւորումը:

Ապրիլին Երեւան կատարած այցի ժամանակ Պունտեսթակի պատգամաւոր, Արտաքին յարաբերութիւններու հարցերով խորհրդարանական յանձնաժողովի անդամ Քրիսթոֆ Բերգներ ըսած էր,

Շար.ը էջ 5

## Թրքական Խորհրդարանէն Ներս Յարձակում՝ Կարօ Փայլանի Վրայ



Կարօ Փայլան յարձակումի թիրախ կը դառնայ թրքական խորհրդարանէն ներս

Թուրքիոյի խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան յայտարարեց, որ սահմանադրական յանձնաժողովի նիստին տեղի ունեցած ծեծկռտուքի ժամանակ իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան (ԱԶԿ) պատգամաւորները յատուկ կերպով զինք թիրախ դարձուցած են իրենց հարուածներուն:

ԱԶԿ-ի եւ քրդամէտ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան (ԺԴԿ) պատգամաւորներուն միջեւ ձեռնամարտէն յետոյ իշխող ուժի պատգամաւոր Մեհմեդ Մեթիներ Կարօ Փայլանին մեղադրած է կռիւը հրահրելու մէջ:

Թրքական «Բիանեթ» գործակալութեան տուած իր հարցազրոյցին մէջ Փայլան, մասնաւորապէս, ըսած է. - «Շարք մը պատգամաւորներ ծրագրուած կերպով վրաս յարձակեցան: Իսկոյն դարձայ անոնց թիրախը եւ 20-30 երկվայրկեանի ընթացքին շուրջ 100 բռունցքի հարուած ստացայ: Յետոյ ալ իմ հասցէին խտրական արտայայտութիւններ հնչեցուցին»:

Փայլանը շեշտած է, որ նման վերաբերմունքի արժանացած է յատկապէս հայ ըլլալուն համար, քանի որ իրեն հասցէագրուած

Շար.ը էջ 5

## Հ.Բ.Ը.Մ.Ի 110-ամեակը Լոս Անճելոսի մէջ




Նլոյթ կ՚ունենայ բարերար Ռուբէն Վարդանեան: Զրոյցը կը վարէ ՀԲԸՄ-ի Արեւմտեան Շրջանի ատենապետուհի Թալին Եագուպեան

Մայիս ամսուան գաղութային ձեռնարկներէն առաջինը հանդիսացաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան 110րդ տարեդարձը, որ տեղի ունեցաւ Մայիսի 1ին, 2016 Լոս Անճելոսի The Reef հաստատութեան 11րդ յարկը:

Որոշուած ժամուն բազմահարիւր հանդիսականներ սկսան խճողուիլ կառոյցի ներանցքներուն եւ կողմնակի ցուցասրահներուն մէջ: Հետաքրքրական էին այնտեղ ցուցադրուած բազմատասնեակ իւղանկարները, ջրանկարներն ու գծագրութիւնները, որոնք ներկայացուած էին սկսնակ արուեստագէտներու կողմէ (մեծ մասով տեղւոյս հայկական վարժարաններու աշակերտներ):

Արհեստավարժ տաղանդաւոր գեղանկարիչներու կողքին այս ցուցահանդէսով Հ.Բ.Ը.Մ.ը խթան կը հանդիսանար արուեստի ճանապարհով եւս քաջալերել մեր նորահաս սերունդին:

Փափաքելի է որ նման ցուցահանդէս մը աւելի տարբեր միջա-

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Սերժ Սարգսեանի չորրորդ եւ ամենակարեւոր պայմանը

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*ՀՀԿ գործկոմի նիստից յետոյ խօսնակ Շարմազանովը ասել է երեք պայմանները, որոնք Երեւանը դնում է բանակցային սեղանի վերադառնալու համար: Ըստ Շարմազանովի, դրանցից առաջինը վստահութեան մեխանիզմների ներդրումն է, երկրորդը՝ հասցէական յայտարարութիւնները, եւ երրորդը՝ երաշխիք, որ Ատրպէյճանը չի գնայ Արցախի հանդէպ ագրեսիայի:*

*Ինչպէս երեւում է, բանակցային սեղան վերադարձի պայմանների շարքում չկայ Արցախը բանակցային կողմ դարձնելը, եւ դա Հայաստանի դիրքորոշման մէջ առաւելագոյնն արտայայտւում է 1994 թուականի հրադադարի վերհաստատման մասին պնդմամբ: Դրանով իհարկէ Արցախը կողմ է, բայց ոչ բանակցային, այլ ընդամէնը հրադադարի կողմ:*

*Ինչու՞ Երեւանն իր պայմանների շարքում չի դնում Արցախի բանակցային սեղան վերադարձի խնդիրը, ինչու՞ չի սահմանում, որ Ատրպէյճանը պատերազմի նոր փորձից յետոյ պէտք է բանակցութեան նստի նաեւ Արցախի հետ: Ըստ երեւոյթին, հայկական կողմը դա համարում է իր փոխզիջումը, ինչի մասին յայտարարել են բազմաթիւ անգամ, որ Արցախը չճանաչելը հայկական կողմի փոխզիջումն է:*

*Բայց, այդ դէպքում ինչու՞ է Հայաստանը բանակցային սեղանին քննարկում տարածքային փոխզիջման հարց: Իսկ Հայաստանը հենց այդ հարցն էլ քննարկում է, ինչպէս խոստովանեց Սերժ Սարգսեանը Բլումբերգին, թէեւ այդտեղ խոստովանութիւն մեծ հաշուով չկար՝ թէ Լեւոն Տէր-Պետրոսեանի, թէ Ռոբերտ Քոչարեանի նախագահութեան շրջանում էլ հայկական կողմը բանակցել է հենց այդ փոխզիջման հիմքով:*

*Ստացւում է, որ հայկական կողմը մի փոխզիջում արդէն անում է՝ չի ճանաչում Արցախի անկախութիւնը, եւ միւս փոխզիջումն էլ քննարկում է՝ տարածքների հարցը, ընդ որում քննարկում է տարածքների հարց, որոնք ամրագրուած են Արցախի Սահմանադրութեամբ:*

*Փաստօրէն, քառօրեայ պատերազմից յետոյ հայկական կողմը չի հրաժարւում երկու փոխզիջումներից որեւէ մէկից՝ կամ ճանաչել Արցախն ու պահանջել Արցախի ճանաչում առնուազն որպէս բանակցութեան կողմ, կամ հրաժարուել բանակցել տարածքների հարց ենթադրող որեւէ փաստաթղթի կամ բովանդակութեան շուրջ, եթէ այդ քննարկմանը ներկայ չէ Արցախը որպէս բանակցութեան իրական կողմ:*

*Բանն այն է, որ եթէ Հայաստանի պայմանները կատարւում են, եւ Երեւանը համաձայնում է վերադառնալ բանակցութեան սեղան, այդ սեղանին շարունակելու է լինել այն, ինչ եղել է մինչ այժմ՝ կոչուի դա Մադրիդեան սկզբունք, թէ կազանեան փաստաթուղթ: Երեւանը գուցէ յոյս ունի, որ եթէ Ատրպէյճանի ռազմատենչութիւնը զսպուի, հնարաւոր կը լինի եւս մի քանի տարի, գուցէ եւս երկու կամ աւելի տասնամեակ ձգել գործընթացը ներկայիս վիճակում, քննարկելով այդ սկզբունքները:*

*Պէտք է ասել, որ այդ յոյսն իհարկէ անհիմն չէ: Վերջին հաշուով, եթէ Ատրպէյճանը զրկւում է ռազմատենչութեան հնարաւորութիւնից, եթէ զրկւում է յարձակման հնարաւորութիւնից եւ սահմանւում են հրադադարը խախտող կողմի համար յստակ պատասխանատուութեան մեխանիզմ, պատժամիջոցներ, ապա բանակցութիւնը հնարաւոր է ձգել անվերջ, եւ այդ դէպքում թւում է, որ բովանդակութիւնը դառնում է ֆորմալ մի բան, եթէ անգամ ամբողջութեամբ չի բխում Հայաստանի եւ Արցախի շահից ու անվտանգութիւնից:*

*Ատրպէյճանն Ապրիլի 2-ին Արցախի վրայ յարձակուեց ոչ թէ այն պատճառով, որ չկար հրադադարի պահպանման մեխանիզմ կամ փաստաթուղթ, այլ որովհետեւ կային այդ յարձակումը կազմակերպելու միջազգային քաղաքական նախադրեալներ, այդ գրոհը թոյլ տուող տարածաշրջանային իրավիճակ, եթէ անգամ այդ իրավիճակի հետեւանքով Ատրպէյճանը ոչ թէ հնարաւորութիւն էր ստացել, այլ արդէն պարտադրուած էր գնալ իր համար մեծ հաշուով փակուղային քայլի:*

*Իսկ այդ իրավիճակը մէկ օրում չէ, որ ստեղծուել էր: Եւ տարիների ընթացքում այդ իրավիճակի ձեւաւորմանը իր մասնակցութիւնն ունեցել է նաեւ Հայաստանը, տարբեր դրուագներով, այդ թւում Արցախի հարցի բանակցային գործընթացում իր մօտեցմամբ, երբ տարիներ շարունակ ակնյայտօրէն եղել է այն յոյսը, որ կարելի է համաձայնութիւն տալ տարածքային այսպէս ասած փոխզիջմանը, միեւնոյն է հարցը դրան չի հասնի, քանի որ կամ Ատրպէյճանը մշտապէս կը պահանջի ամբողջը, կամ ԱՄՆ եւ Ռուսաստանը միմեանց հետ կը մրցեն այդ լուծման «օպերատոր» լինելու համար, եւ հարցն այդպէս էլ կը մնայ:*

*Հետեւաբար, հայկական կողմի խնդիրը ոչ թէ իրավիճակ ֆիքսելն է, ինչին ուղղուած են երեք պայմանները, այլ իրավիճակ փոխելը: Ֆիքսելը դա միջազգային խնդիր է, որը միջազգային դերակատարները կը լուծեն առանց հայկական կողմի պայմանների էլ, եթէ ստացուի:*

*Հայկական կողմի անելիքը առանց այդ էլ միջազգային հանրութեան գործողութիւնների ծիրում յայտնուած խնդիրների լուծում պահանջելը չէ, այլ սեփական խնդիրները լուծելը, օգտուելով միջազգային նպատակների համարժէքութիւնից: Եւ այստեղ է, որ Հայաստանը պէտք է օժանդակի այդ նպատակներին, դրանցից օժանդակութիւն ստանալու համար:*

*Ըստ այդմ, հայկական կողմը պէտք է փորձի իրավիճակ փոխել, որպէսզի միջազգային մեխանիզմները ֆիքսեն արդէն փոխուած իրավիճակը, ոչ թէ իրավիճակը վերադարձնեն հետ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Հեքիաթներով կերակրուող հասարակութիւնը

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

*Յայտնի ճշմարտութիւն է՝ երբեք այնքան շատ չեն ստում, որքան ընտրութիւններից առաջ, պատերազմի ժամանակ եւ որսից յետոյ: Հիմա այդ առումով Հայաստանում «իդէալական վիճակ է»՝ սահմանին փաստացի պատերազմ է, ընտրութիւններին էլ ընդամէնը մի տարի է մնացել: Դրա համար էլ ստի ու կեղծիքի պակաս չի զգացւում: Ընդ որում՝ ռազմաճակատից ստացուող լուրերում սուտ համարեա՛ չկայ, լրատուութիւնը բաւականին օբիեկտիւ է: Հասարակական-քաղաքական կեանքում է, որ ամէն ինչ խեղաթիւրուած է, եւ իրավիճակի օբիեկտիւ ընկալման ցանկացած փորձ, մեղմ ասած, չի խրախուսւում:*

*Այսօր ամենայաճախ հնչող հարցը հետեւեալն է՝ «լաւ, էս ամէն ինչի վերջը ո՞րն ա» (խօսքը, հասկանալի է, ղարաբաղեան հակամարտութեան մասին է): Եւ հենց այս հարցն է, որի օբիեկտիւ պատասխանը չկայ՝ պետական պաշտօնեաները, քաղաքական գործիչներն ու տարբեր տրամաչափի քաղաքագէտները գերադասում են պատասխանի փոխարէն վերամբարձ ու ոչինչ չասող ճառեր արտասանել: Նրանց երեւի թւում է, թէ մարդկանց դա դուր է գալիս, որովհետեւ մարդիկ լսում ու եզրակացնում են, որ տուեալ հռետորը հայրենասէր է: Բայց մարդկանց ոչ թէ տուեալ հռետորի հայրենասիրութեան չափն է հետաքրքրում, այլ այն, թէ ինչո՞վ է վերջանալու այս ամէնը (եթէ երբեւէ վերջանալու է):*

*Օբիեկտիւ իրականութիւնը հասկանալու համար պէտք է մէկ առ միշտ արձանագրել հետեւեալը: 1. Ղարաբաղեան խնդիրը բանակցութիւնների ճանապարհով չի լուծուելու երբեք: Որքան էլ կողմերը հակառակը յայտարարեն, մի բան ակնյայտ է՝ Ատրպէյճանը երբեք չի համաձայնուի ճանաչել ԼՂՀ անկախութիւնը: Տեսականօրէն դա կարող էր տեղի ունենալ միայն մի դէպքում՝ եթէ հայկական բանակը հասնի Պաքու, եւ Ատրպէյճանը, որպէս պետութիւն, վերանայ երկրի երեսից: Բայց դա գործնականում անհնար է, մեզ պարզապէս թոյլ չեն տայ: Միւս կողմից ակնյայտ է, որ հայկական կողմը երբեք չի համաձայնուի Ղարաբաղը թողնել Ատրպէյճանի կազմում: Եթէ անգամ Հայաստանի որեւէ ղեկավար նման փաստաթուղթ ստորագրի, դա ոչինչ չի փոխի, որովհետեւ Հայաստանում կայծակնային արագութեամբ իշխանափոխութիւն տեղի կ'ունենայ: 2. Եթէ խաղաղ կարգաւորումը բացառուած է՝ մնում է երկու տարբերակ. կամ լայնամասշտաբ պատերազմ, կամ անորոշ ժամանակով իրավիճակի սառեցում՝ ժամանակ առ ժամանակ կրկնուող «քառօրեայ պատերազմներով»:*

*Քննարկենք առանձին-առանձին: Լայնամասշտաբ պատերազմը մեզ ձեռնտու չէ նախ եւ առաջ այն պատճառով, որ «խաղի կանոնները» Ղարաբաղի եւ Ատրպէյճանի համար նոյնը չեն: Մեզ պարզապէս թոյլ չեն տայ գրաւել Պաքուն, իսկ եթէ ատրպէյճանցիները գրաւեն Ստեփանակերտը՝ արտաքին աշխարհը պարզապէս աղմուկ կը բարձրացնի, եւ վերջ: Այլ կերպ ասած՝ հայկական կողմը նոյնիսկ տեսականօրէն վերջնական յաղթանակի հնարաւորութիւն չունի, իսկ ատրպէյճանական կողմը՝ ունի (բարեբախտաբար՝ միայն տեսական): Հետեւաբար՝ հայկական կողմը պարտուելու իրաւունք չունի, պարտութիւնը կը նշանակի ոչնչացում, իսկ ատրպէյճանական կողմը այդպիսի իրաւունք ունի (առաջին պատերազմում պարտուեցին, բայց չոչնչացան): Եզրակացութիւն. Հայաստանը պիտի դառնայ հզօր, զարգացած երկիր, որպէսզի պարտութիւնը բացառուի: Երկրորդ տարբերակ՝ իրավիճակի սառեցում անորոշ ժամանակով: Սա Ատրպէյճանին ձեռնտու չէ, հետեւաբար՝ նրանք այդ «անորոշ ժամանակն» օգտագործելու են լայնամասշտաբ պատերազմին աւելի լաւ նախապատրաստուելու համար:*

*Իսկ ինչո՞ւ են սրա փոխարէն հասարակութեանը կերակրում խաղաղ բանակցութիւնների, ինչ-որ փոխզիջումների կամ Ատրպէյճանը երկրի երեսից ջնջելու մասին հեքեաթներով: Որովհետեւ եթէ հասարակութիւնը վերջնականապէս հասկանայ, որ այս վիճակը դեռ շատ երկար է շարունակուելու, եւ մեր միակ ելքը նորմալ պետութիւն ունենալն է, անմիջապէս կը բարձրացնի յաջորդ հարցը՝ բայց արդեօ՞ք հնարաւոր է այս որակի իշխանութիւններով նորմալ երկիր ունենալ:*

*Մի խօսքով՝ պէտք է հասկանալ, որ փաստացի պատերազմական վիճակը ժամանակաւոր երեւոյթ չէ, ու միշտ է այսպէս լինելու: Հետեւաբար՝ չի կարելի սպասել, որ «ամէն ինչ ինքն իրեն անցնի»: Երկարաժամկէտ խնդիրները երկարաժամկէտ ու հիմնաւոր լուծումներ են պահանջում:*

*«ՋՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Փոստանջեանը Առաջարկում է Սպառազինութիւն Գնել Բարձրաստիճան Պաշտօնեաների Անձնական Միջոցներով

«Առաջին գումար ներդնողը պէտք է լինէր Սերժ Սարգսեանը, եւ առաջին մուտքը պէտք է կազմէր առնուազն իր կողմից հարիւր միլիոն դոլար: Դրանից յետոյ՝ բոլոր այն պաշտօնեաները, որոնց թիւը՝ ընտանիքի անդամներով, կազմում է շուրջ հինգ հարիւր մարդ... այդ բոլորը որ այդ հիմնադրամը այդ գումարներով համալրեն, մենք կ՚ունենանք նաեւ ժամանակակից սպառազինութիւն»,- խորհրդարանական ճեպազրոյցների ընթացքում յայտարարեց «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Զարուհի Փոստանջեանը՝ պնդելով նաեւ, որ հարուստներն ու նրանց ընտանիքների անդամները առաջնագծում չեն յայտնուել:



«Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Զարուհի Փոստանջեան

Վահրամ Բաղդասարեանը (ՀՀԿ) ընդվզեց. - «Օրինակ, Ղարաբաղի ֆրակցիայի ղեկավարի երկու տղաները առաջնագծում հանդիպել են ինձ: Տղաներս փոքր են, բայց իմ հօրաքրոջ թոռը եւ հօրեղբօրս թոռը այսօր առաջնագծում են, որոնց նոյնպէս հանդիպել եմ: Նկատի ունեմ, որ ես այդ հնարաւորութիւնները կարող էի ունենալ, որ նրանց հետ քաշէի առաջնագծից: Չկայ նման տիպի երեւոյթ: Համենայն դէպս իմ ընտանիքում եւ իմ ազգում նման խնդիր չկայ»:

## ՀԱԿ-ի Կարծիքով Ընտրական Օրէնսգրքի Նախագծի Քուէարկութիւնը Կեղծուած է

Ընդդիմադիր ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի կարծիքով, Ընտրական օրէնսգրքի նախագծի առաջին ընթերցմամբ քուէարկութեան արդիւնքները կեղծուած են. քուէարկութիւնը, ըստ նրա, կազմակերպուել է Ազգային ժողովի կանոնակարգ-օրէնքի կոպտագոյն խախտումներով. - «Կոչ ենք անում իշխանութիւններին իսկապէս սթափուել, հրաժարուել նման աճպարարութիւններից: Եթէ խօսքը այն է, որ մենք պէտք է միասնաբար դիմագրաւենք արտաքին սպառնալիքներին, ուրեմն իրենք պէտք է իրենց գործողութիւնների մակարդակը ապահովեն: Այլապէս որեւէ հաւատ հանրութեան մէջ չի լինի»:

«Որեւէ կանոնակարգի խախտում չի եղել», - հակադարձեց Վահրամ Բաղդասարեանը: - «Դա այն պատրուակներն են, որոնք ցանկանում են ցեխ շպրտել, մրոտել արդէն իսկ այսքան ամիսներ, շուրջ մէկ տարուց աւելի քննարկուած Ընտրական օրէնսգիրքը, որի ժամանակ իրենք չկարողացան իրենց հնարաւորութիւնները միացնել եւ ձախողել: Այսինքն, նախկին Ընտրական օրէնսգիրքը իրենց ձեռք էր տալի, որն այդքան տարի քննադատել էին»:

ՀԱԿ-ը, ըստ Զուրաբեանի, չի հրաժարուել կոնսենսուսի գաղափարից: Ընդդիմադիր գոնկրէսը օրէնսգրքի առաջին ընթերցման քննարկումներին իր մասնակցութիւնն առկախել էր հենց կոնսենսուսի բացակայութեան պատճառաբանութեամբ. - «Ոչ ոք թող այդ կոնսենսուսի գաղափարը չթաղի: Մենք դեռ անելիք ունենք»:

Ցղում անելով Ընտրական օրէնսգրքի քուէարկութեանը՝ Վահրամ Բաղդասարեանը յայտարարեց, թէ կոնսենսուսը կայացել է. - «98 ձայն էր... ինքնըստինքեան դա նշանակում է արդէն կոնսենսուս: Բացառութեամբ «Օրինաց երկրի», որոնք չեն քուէարկել, կա՞ր այդպիսի ֆրակցիա, որոնց անդամները չեն քուէարկել կողմ»:

Միքայէլ Մելքումեանը (ԲՀԿ) ասաց. - «Իշխանութիւնները եթէ զգում են, որ ինչ-որ մի սահմանից յետոյ այդ կոնսենսուսը բերելու է որոշակի պրոբլեմների, ուրեմն դրանք սահմանափակում են էդ կոնսենսուսի խորութիւնը կամ լայնութիւնը կամ բարձրութիւնը»:

## «Հայաստանում Կոռուպցիայի Դէմ Պայքարի Համար Չկայ Քաղաքական կամք»

Հայաստանում կոռուպցիայի դէմ պայքարի համար չկայ քաղաքական կամք: Այս մասին լրագրողներին յայտնել է Transparency International հակակոռուպցիոն կենտրոնի ղեկավար Վարուժան Հոկտանեանը՝ Konrad Adenauer Stiftung հիմնադրամի աջակցութեամբ, Հայաստանի տնտեսագէտ լրագրողների ակումբի կազմակերպած քննարկման ժամանակ:

Նրա խօսքով, 2003 թուականից Հայաստանը առաջ չի ընթանում Transparency International-ի կոռուպցիայի ընկալման վարկանիշում: ԵՏՄ-ում Հայաստանի վարկանիշը ամենաբարձրն է, բայց դա քիչ մխիթարական է, ընդգծել է Հոկտանեանը:

Նոյն Վրաստանը 2003 թուականից կոռուպցիայի ընկալմամբ աշխարհի վատթարագոյն 5 երկրներից մէկն էր, իսկ հիմա զգալի առաջընթաց է արձանագրել:

ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Միքայէլ Մելքումեանի խօսքով, մտահոգիչ է ոչ միայն մենաշնորհների առկայութիւնը, այլեւ հասարակութեան հանդուրժողական վերաբերմունքը դրանց նկատմամբ:

## ՀՀԿ Փոխխօսնակ Հերմինէ Նաղդալեանի Աղմկայարոյց Յայտարարութիւնը

«Տեսանիւթը տեղադրուած է մամուլում, եւ մարդկանց, որոնք անդրադառնում են դրան, ես հարցնում եմ՝ դուք արդեօք տեսե՞լ էք այդ տեսանիւթը՝ ով ինչ է ասել, որովհետեւ լրագրողն ինձ հարցը տուել է՝ արդեօք Ձեր սկզբո՞ւնքն է գրաւեալ տարածք վերադարձնելը, որին ես վերադարձրել եմ՝ մեր սկզբունքը չի գրաւեալ տարածք վերադարձնելը, մեր սկզբունքն այն է, որ արցախեան հարցը պիտի լուծուի միջազգային ճանաչման հանրաքուէի, արցախեան ժողովրդի իրական վերջնական կամարտայայտման հիման վրայ»,- NEWS.am-ի հետ զրոյցում ասաց ՀՀԿ փոխխօսնակ Հերմինէ Նաղդալեանը:

Մեր պնդմանը, որ բացի դրանից, նաեւ ասել է՝ «մենք ձեր հողերը, կամ էն հողերը, որոնց վրայ մենք այսօր այդ իրաւունքը չունենք, մենք այդ հողերը չենք ուզում», ինչի հիման ատրպէյճանական մամուլն յայտարարում է, թէ Հայաստանի իշխանութիւններն ընդունում են, որ դրանք իրենց հողերը չեն, Նաղդալեանը արձագանգել է. «Ես համարում եմ, որ այս ամէնի մէջ կայ բաւականին մեծ թիւրիմացութիւն, յաճախ է պատահում նման գործելակերպ, որ խօսքից վերցնում, անջատում են մի միտք, որն ամբողջական չի, կտրուած է ամբողջ խօսքից, դա պտտեցնում են ու դրա վրայ կառուցում ստեր, անում եզրակացութիւններ: Ես անընդունելի եմ համարում այդպիսի գործելաոճը»:



ՀՀԿ Փոխխօսնակ Հերմինէ Նաղդալեան

Հարցին՝ արդեօք Նաղդալեանը չի պատրաստւում հրաժարական տալ՝ հաշուի առնելով, որ դա են պահանջում մի խումբ քաղաքական եւ հասարակական գործիչներ, այդ թւում՝ Արցախից, նաեւ այն, որ առաջիկայ ԵԽԽՎ նստաշրջանում ատրպէյճանական պատուիրակութիւնն անխուսափելիօրէն օգտագործելու է նրա յայտարարութիւնը, Նաղդալեանն արձագանգեց. «Այսօր հրաժարականի հարցադրումը շինծու է, մտացածին եւ հնարուած է շահագրգիռների կողմից: Ես կարծում եմ՝ մեր երկրում որեւէ պաշտօնեայի հրաժարական տալու խնդիրը լուծւում է իշխող կուսակցութեան ղեկավարութեան լուծումներով:

## «Եթէ Օսկանեանն Ասում է Ընտրութիւնները Կեղծուել Են՝ Ուրեմն Իր Գործունէութիւնը Էլ Կեղծ է Եղել». ՀՀԿ-ական Պատգամաւոր

Եթէ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանն ասում է՝ 20 տարի ընտրութիւնները կեղծուել են, ուրեմն ըստ էութեան իր այդ ողջ ժամակաշրջանի գործունէութիւնն էլ կեղծ է եղել: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Արտակ Դաւիթեանը:

«Այս 25 տարիների ընթացքում մենք այս դասագրքային ճշմարտութեանն ենք հանդիպում՝ երբ իշխանութեան մաս ես կազմում, ատամներով պաշտպանում ես բոլոր էն երեւոյթները, որ միարժէքօրէն չեն ընդունւում հանրութեան շրջանում, երբ զրկւում ես էդ լծակներից, 180 աստիճանի հակառակ դիրքորոշում ես արտայայտում: Ես իրենից լսել եմ նաեւ կարծիքներ, որ ասում է՝ գիտէք, ես էլ եմ մեղաւոր, բայց մենք ոչ էդ ենք լսել, ոչ էլ իր մեղաւորութեան զգացումն ենք տեսել»,-ասաց իշխանական պատգամաւորը:

Վերջինս յորդորեց, որ Վարդան Օսկանեանը մատնացոյց անի, թէ որտեղ փնտռեն այն դատապարտող յայտարարութիւնները, որոնք իբրեւ արել է, երբ եղել է արտգործնախարար:

«Ծիշդն ասած, եթէ տեղը մատնացոյց անի, թէ որտեղ պրպտենք իր ասածները: Եթէ իր տանն է ասել կամ Միացեալ Նահանգների դեսպանատան աշխատակիցների հետ փակ հանդիպման ժամանակ, մի զուցէ վիքիլիքսեան բացայայտումներից դեռ կը լսենք: Եթէ ասում է կեղծուել են ընտրութիւնները 20 տարի ու ինքն էլ այդ ժամանակ եղել է արտգործնախարար, ըստ էութեան նշանակում է, որ իր այդ ողջ ժամանակաշրջանի գործունէութիւնը կեղծ է եղել, թող էդ հարցին էլ պատասխանի: Ձեւաւորուել է քաղաքական իշխանութիւն, որը նրան ներկայացրել է որպէս կարեւորագոյն որոշում կայացնողներից մէկը եւ այդ կարեւորագոյն որոշումները հիմա պիտի կասկածի տակ առնե՞նք: Դա տրամաբանական հարց է, որը բխում է իր յայտարարութիւնից»:

## 2016-ի Առաջին Եռամսեակում Նուազել Են Ամուսնութիւններն Ու Ամուսնալուծութիւնները

2016թ. առաջին եռամսեակում Հայաստանում նուազել են ամուսնութիւններն ու ամուսնալուծութիւնները: Այս մասին Մայիսի 2-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց ՀՀ ԱՎԾ մարդահամարի եւ ժողովրդագրութեան բաժնի պետ Կարինէ Գույումճեան:

Նրա խօսքով՝ Հայաստանում 2016թ. Յունուար-Մարտին գրանցուել է 3824 ամուսնութիւն՝ 2015թ. նոյն ժամանակահատուածի 4348 ամուսնութեան համեմատ. «Ամուսնութեան ցուցանիշը նուազել է գրեթէ 13 տոկոսով՝ 1000 բնակչի հաշուով ամուսնութեան ընդհանուր գործակիցը կազմել է 5.1 պրոմիլ 2015թ. 5.9 պրոմիլի համեմատ»:

Կարինէ Գույումճեան նշեց, որ 2016թ. առաջին եռամսեակում 850 ամուսնալուծութեան դէպք է արձանագրուել՝ 2015թ. նոյն ժամանակաշրջանի 938 դէպքի համեմատ:

## ԼՈՒՐԵՐ

### ԼՂ Անկախութիւնը Ճանաչելու Օրինագիծը Կառավարութեան Օրակարգում

Հայաստանի կառավարութեան Մայիսի 5-ի նիստի օրակարգում ընդգրկուած է Ազգային ժողովի պատգամաւորներ Զարուհի Փոստանջեանի եւ Հրանդ Բագրատեանի՝ օրէնսդրական նախաձեռնութեան կարգով ներկայացրած «Արցախի Հանրապետութիւնը ճանաչելու մասին» օրինագիծը:

Կառավարութեան եզրակացութիւնը ստանալուց յետոյ նախագիծը սահմանուած կարգով ներկայացուելու է խորհրդարանի քննարկմանը: Այն ունի երկու յօդուած՝ «Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչում է Արցախի Հանրապետութիւնը», եւ «Սոյն օրէնքն ուժի մէջ է մտնում պաշտօնական հրապարակման օրուան յաջորդող օրը»:

«Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը ներկայացուած օրէնքի նախագծի ընդունումը պայմանաւորում է Հայաստանի եւ Արցախի միջեւ քննարկումների արդիւնքներով՝ հաշուի առնելով հետագայ զարգացումները, այդ թւում նաեւ արտաքին գործօնները: Միաժամանակ յայտնում ենք, որ, ներկայացուած օրէնքի նախագիծը Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովում քննարկելիս, յարակից զեկուցմամբ հանդէս կը գայ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը», - ասուած է, մասնաւորապէս, օրինագծի հետ նոյն փաթեթում կառավարութեան պաշտօնական կայքէջում հրապարակուած՝ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեանին վարչապետ Յովիկ Աբրահամեանի նամակի նախագծում:

### Թալիշից Հայաստան է Տեղափոխուել Շուրջ 350 Մարդ

Արցախի Մարտակերտի շրջանի Թալիշ գիւղից քառօրեայ պատերազմի հետեւանքով Հայաստան է տեղափոխուել շուրջ 80 ընտանիք, որոնք բնակւում են Հանրապետութեան տարբեր քաղաքներում եւ գիւղերում: Այս մասին NEWS.am-ի թղթակցին ասաց Թալիշի գիւղապետ Վիլեն Պետրոսեանը:

«Հայաստան է տեղափոխուել շուրջ 350 մարդ, որոնք բնակութիւն են հաստատել տարբեր տեղերում: Մօտ 160 մարդ էլ այժմ Ստեփանակերտում է»,- ասաց գիւղապետը:

Հայաստան տեղափոխուած թալիշցներն այսօր սոցիալական եւ կացարանի խնդիրներ ունեն: Գիւղից հեռանալիս թալիշցիները չեն հասցրել ոչինչ վերցնել իրենց հետ եւ այսօր առաջին հերթին առաջին անհրաժեշտութեան իրերի եւ զբաղուածութեան խնդիր ունեն. Նրանց մեծ մասը բնակւում է հարազատների մօտ:

Աւելի քան 3 շաբաթ Հայաստանում ապրելուց յետոյ միայն Զարենցաւան էր այցելել Արցախի աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարութեան պատասխանատուները, որոնք էլ այնտեղ բնակուող թալիշցիների հետ քննարկել են նրանց հետագայ բնակութեան հետ կապուած հարցեր:

Միեւնոյն ժամանակ, Հայաստանում Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցիչ Կարլէն Աւետիսեանը մեզ հետ զրոյցում ասել էր, որ դեռ յստակ որոշում չունեն, քննարկում են տարբեր առաջարկներ:

### Տիարպէքիրի Հայկական Եկեղեցին Պետականացնելու Դէմ Դատական Հայց

Թուրքիայի քրտաբնակ Տիարպէքիրի Սուրի շրջանում գտնուող հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամը եկեղեցու պետականացումը չեղեալ յայտարարելու համար դիմել է դատարան:

Ինչպէս տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակօս»-ը, Տիարպէքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի փաստաբաններից Ալի Էլբէյօղլուն նշել է, որ եկեղեցու պետականացումը չեղեալ յայտարարելու համար դատական հայց է ներկայացուել վարչապետի աշխատակազմի եւ Քաղաքաշինութեան նախարարութիւնների դէմ:

Փաստաբանը շեշտել է, որ եկեղեցու պետականացումը հակասում է մշակութային ժառանգութեան պահպանութեան օրէնքին, միջազգային համաձայնագրերին, այդ թւում Լոզանի համաձայնագրին:

Նշենք, որ Թուրքիայի նախարարների խորհրդի որոշումով Տիարպէքիրի Սուրի շրջանում գտնուող բոլոր կառոյցները, այդ թւում Տիարպէքիրի Սուրբ Կիրակոսը, պետականացուել են:

Մերձաւոր Արեւելքի ամենամեծ եկեղեցիներից մէկի՝ Սուրբ Կիրակոսի վերաբացումն ու օծումը տեղի է ունեցել 2011- հոկտեմբերի 22-ին, իսկ առաջին պատարագը մէկ օր անց՝ հոկտեմբերի 23-ին:

Սուրբ Կիրակոսի վերանորոգումը իրականացուել է տիարպէքիրցի հայերի եւ Տիարպէքիրի քաղաքապետարանի աջակցութեամբ:

Սուրբ Կիրակոսը վերաբացուել է որպէս գործող եկեղեցի:

### Պաշտպանութեան Ոլորտում Պաշտօնանկութիւնները Շարունակուելու Են

«Իրատես» թերթը գրում է. «Պաշտպանութեան ոլորտում պաշտօնանկութիւնները շարունակուելու են: Մեր տեղեկութիւններով, առաջիկայում աշխատանքային թերացումների համար որոշ վարչութիւնների պետեր եւս հրաժեշտ կը տան իրենց աթոռին:

Աշխատանքից հեռացուելու է նաեւ ՊՆ ռազմարդիւնաբերական վարչութեան պետ Մուրադ Իսախանեանը, ով թերացել է տեխնոլոգիական զարգացման ոլորտի մասնագէտների հետ աշխատանքում:

Պաշտպանութեան նախարարութեան պաշտօնեաների հեռացմանը զուգընթաց, մեր աղբիւրը չբացառեց նաեւ, որ այլ ոլորտի պատասխանատուներ եւս կ'ազատուեն աշխատանքից: Ընդ որում, չի բացառւում, որ հերթը կը հասնի խոշոր «շնաձկներին»: Սակայն այս օրերին երկրի ղեկավարութիւնը նման քայլերի դեռ չի գնա՝ հաշուի առնելով սահմանային լարուածութիւնը: Երբ իրավիճակը կայունանայ, կը մեկնարկի ներքին «զտումների» փուլը»:

### «Իշխանութիւնները Զուսպ Անում Են Այն, Ինչ Պահանջում Է Այսօրուայ Իրավիճակը». Լեւոն Տէր-Պետրոսեան



Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Բակօ Սահակեան Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած հանդիպման ընթացքին

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի հետ հանդիպումից յետոյ Մայիսի 3-ին, Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, անդրադառնալով ղարաբաղեան հիմնախնդրի ներկայ փուլին, լրագրողների հետ զրոյցում ասել է, որ Հայաստանի եւ Արցախի իշխանութիւնները գործում են հաստատակամ ու վստահ: Այս մասին հաղորդում է «Արցախպրես»-ը:

«Կարծում եմ իշխանութիւնները հանգիստ, զուսպ անում են այն, ինչ պահանջում է այսօրուայ իրավիճակը»,- ասել է Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Բակօ Սահակեանը եւ Լեւոն Տէր-Պետրոսեանը, ԼՂՀ նախագահի մամուլի գրասենեակի հաղորդմամբ քննարկել են ղարաբաղա-ատրպէյճանական սահմանին Ապրիլի 2-ից 5-ը հակառակորդի կողմից սանձազերծուած լայնածաւալ պատերազմական գործողութիւններին վերաբերող մի շարք հարցեր: Առանձնազրոյցը տեւել է մօտ մէկ ժամ:

### Փորձագէտներն Չեն Բացառում Ատրպէյճանի Կողմից Յարձակման Նոր Փորձ Ձեռնարկելու Հնարաւորութիւնը

Տարածաշրջանային հետազօտութիւնների կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսեանի կարծիքով, ապրիլեան պատերազմը Ատրպէյճանը յաղթանակ է համարում, եւ դրանով ոգեւորուած առաջիկայ օրերին կամ շաբաթներին կարող է ստատուս քուօն խախտելու նոր փորձ անել:

«Ընդհանուր առմամբ չկայ ոչինչ եւ ոչ ոք, որ թոյլ չտայ Ատրպէյճանին ձեռնարկել ռազմական նոր գործողութեան փորձ: Զսպող ոչինչ չկայ: Աւելին, Ատրպէյճանի յարձակումն արդէն աւելի շատ երբ-ի հարց է, քան եթէ-ի, քանի որ Ատրպէյճանը վերջին յարձակումը յաղթանակ է գնահատում. 21 տարուայ ընթացքում առաջին անգամ Ատրպէյճանը կարողացել է գոնէ ժամանակաւորապէս գրաւել եւ պահել տարածք», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Կիրակոսեանը:

Այդուհանդերձ, փորձագէտի կարծիքով, նոր յարձակումը չի լինի նոյն ուժգնութեան, ինչ Ապրիլի 2-ին էր. - «Ատրպէյճանական ուժերն այնքան պատրաստուած չեն, եւ դեռ բաւարար վերազինուած չեն, որպէսզի սկսեն այդպիսի լուրջ յարձակում: Այդուհանդերձ, մենք պէտք է սպասենք յարձակում շփման գծի հիւսիսային եւ հարաւային հատուածներում՝ առաւելապէս կենտրոնացած վնասներ պատճառելու եւ, ցաւօք սրտի, խաղաղ բնակչութեանը թիրախաւորելու, բայց պակաս ինտենսիւ եւ պակաս կոորդինացուած, քան Ապրիլի 2-ին:»

Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցութեան վերլուծական կենտրոնի ղեկավար Ստեփան Գրիգորեանի պնդմամբ՝ Ատրպէյճանին ոգեւորում է նաեւ միջազգային հանրութեան ոչ միանշանակ արձագանքը, ինչպէս նաեւ այն փաստը, որ Հայաստանն իր որոշումներում ինքնուրոյն չէ:

«Երբ որ մենք սկսեցինք հակահարուած տալ, բանակը սկսեց շարժուել, անսպասելիօրէն ամսի 5-ին կանգնեց: Դա նշանակում է, որ նրանք հասկանում են, որ ինչ-որ մէկը կայ, որը կարող է ասել՝ առաջ մի գնայ, ու դա կարող է դառնալ իրենց համար այդ ստիմուլը շարունակել այդ պատերազմական գործողութիւնները», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց նա:

Փորձագէտներն այս պահին բանակցային ճանապարհով խնդրի լուծում չեն տեսնում:

Ըստ Ռիչարդ Կիրակոսեանի, միջազգային հանրութեան կողմից տարուող նախկին մարտավարութիւնն այլեւս չի աշխատում. - «Հայաստանի համար իրական վտանգը անպայմանօրէն Ատրպէյճանի յարձակումը չէ, այլ թերեւս Մինսկի խմբում Ամերիկայի եւ Ֆրանսիայի ոչ բաւարար ներգրաւուածութիւնն ու Ռուսաստանի դաւաճանութիւնը Հայաստանին»:

Ստեփան Գրիգորեանը նշում է, որ այսօր Հայաստանը պէտք է նախաձեռնող դառնայ, թէ՝ ռազմական առումով, թէ՝ միջազգային հարթակներում:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ-Ի ԳՈՆԿՐԷՍԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՏԷՆԻ ԹԱՐԽԱՆԵԱՆԻ ՀԵՏ



Ապրիլի 30ին Լաս Վեկասի մէջ ընկ. Ժիրայր Կէտէրեանի բնակարանին մէջ տեղի ունեցաւ Նախընտրական հաւաք Տէնի Թարխանեանի հետ: Հանդիպման ներկայ էին Լաս Վեկասի եւ շրջակայքի հայ գաղութի կրօնական եւ հասարակական տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Հնչակեան կուսակցութեան կողմէ ներկայ էր շրջանի ատենապետ Ընկ. Ճորճ Յակոբեան, ընկերակցութեամբ Վարիչ Մարմնի անդամ Ընկ. Կէրի Սինանեանի:

Ներկաները ջերմ ծափողջոյններով դիմաւորեցին ԱՄՆի Գոնկրէսի առաջադրուած թեկնածու Տէնի Թարխանեանին: Ան ելոյթ ունենալով յայտնեց որ ժամանակն է այլեւս որ հայերը իրենց ներկայացուցիչներն ունենան ԱՄՆի Գոնկրէսին մէջ որպէսզի օգտատար հանդիսանան ԱՄՆի հայ համայնքին, բարձրացնեն հայկական հարցերը, սկսելով Մեծ Եղեռնի ցեղասպանութեան ճանաչումով եւ Արցախի անկախութեան ամրապնդումով եւ հայկական այլ հարցերու քննարկումով: Մասնաւորաբար շեշտեց որ իր հայրը Ճէրի Թարխանեանը, որ ժամանակին Լաս Վեկասի պասքեթպոլի մարզիչն էր, նպատակադրած էր հայ մնալ եւ կառչիլ իր արմատներուն, միաժամանակ օգտատար դառնալ իր ազգակիցներուն: Նոյն ձեւով կը մտածէ նաեւ իր որդին որ կը ձգտի իրականացնել իր հօր երազանքը:

Երեկոն անցաւ ընկերային ջերմ մթնոլորտին մէջ եւ ներկաներն իրենց զօրակցութիւնը յայտնեցին ու ընտրարշաւի փայլուն յաղթանակ մաղթեցին թեկնածուին:

## ՖՐԱՆՍԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՀԱՆ ԱՐՔ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ Է ՆԱԽԱԳԱՀ ՖՐԱՆՍՈՒԱ ՀՈԼԼԱՆՏԻ ՀԵՏ



Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի թեմի առաջնորդ Տ. Վահան Արք. Յովհաննիսեան Ապրիլ 29-ին այցելութիւն տուած է Էլիզէի պալատ եւ հանդիպում ունեցած է Ֆրանսայի Նախագահ Ֆրանսուա Հոլլանտի հետ: Այս մասին «Արեւելք» տեղեկութիւն ստացաւ Ֆրանսայի թեմի առաջնորդարանէն: Նշենք, որ հանդիպման ներկայ էր նաեւ Ֆրանսայի առաջնորդի քաղաքական խորհրդատու՝ Արթուր Խանճեան: Սրբազան հայրը Ֆրանսայի Նախագահին հետ քննարկած է տարբեր օրակարգեր, որոնցմէ գլխաւորները կարելի է համարել ցեղասպանութեան ժխտման քրէականացման օրէնքին վերաբերեալ օրակարգը ինչպէս նաեւ արցախեան վերջին զարգացումները:

Այս առաջին այցն է, որ Ֆրանսայի թեմի առաջնորդ մը կը կատարէ Էլիզէի պալատ եւ կ՚ընդունուի երկրի Նախագահին կողմէ:

## Թուրքիա Զգուշացուցած է

Շարունակուած էջ 1-էն

որ Յունիսի սկզբին Պունտեսթակը պիտի քննարկէ բանաձեւի նախագիծ մը, որ պիտի հաստատէ, որ այն ինչ որ մէկ դար առաջ հայերու հետ կատարուած է Օսմանեան կայսրութեան շրջանին, իրականութեան մէջ ցեղասպանութիւն էր:

## ԱՐԻԶՈՆԱՅԻ ՄԷՋ ՎԱՆՏԱԼԻԶՄ. ՊՂԾՈՒԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐ ՄԸ



Վանտալիզմ կատարուած է հայկական եկեղեցւոյ դէմ: Այս մասին կը փոխանցէ 12news ամերիկեան կայքը, որ կը նշէ, թէ ամերիկեան Արիզոնա նահանգի Սքոթցտէյլ քաղաքին մէջ անծանօթներ պղծած են հայկական Սուրբ Աբգար եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղադրուած խաչքար մը: Կայքը հարցազրոյց մը կատարած է եկեղեցւոյ ճարտարապետ Արթին Գանճեանին հետ, որ իր կարգին յայտնած է, թէ եղածը անընդունելի է եւ դատապարտելի: Գանճեան նաեւ ըսած է, թէ եղածը զուգադիպութիւն մը չէ մանաւանդ որ տեղի ունեցած է Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակը ոգեկոչող ապրիլեան օրերուն: Նշենք, որ խաչքարը կանգնեցուած է Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

## Յարձակում՝ Կարօ Փայլանի Վրայ

Շարունակուած էջ 1-էն

վիրաւորանքները ազգային ինքնութեան կը վերաբերէին. - «Չէն կրնար մարսել, որ հայկական ինքնութեամբ մէկը իրենց սուտերը ջուրի երես կը հանէ եւ անսասան կը մնայ: Անոնք կ՚ուզեն իրենց դիմաց ենթարկուող հայու տեսնել: Ինծի թիրախ դարձուցած էին եւ հաշուեյարդար կը տեսնէին՝ որպէս իրական պայքար տանող հայ»:

Թրքական խորհրդարանի սահմանադրական յանձնաժողովէն ներս պարբերաբար կրկնուող կռիւներու եւ լարուածութեան պատճառը պատգամաւորները անձեռնմխելիութենէ զրկելու վերաբերեալ օրինագծին է:

Ամիսներ տեւած բուռն քննարկումներէ ետք յանձնաժողովին կողմէ ընդունուած է օրէնսդրական փոփոխութեան առաջարկը, առանց քրդամէտ ԺԴԿ-ի մասնակցութեան: Տեղի ունեցած ծեծկռտուքէն յետոյ կուսակցութեան պատգամաւորները լքած են օրինագծի քննարկման դահլիճը՝ այսպիսով պոյքոթելով զայն:

Քուէարկութիւնը կատարուած է խորհրդարանէն ներս ներկայացուած միւս երեք կուսակցութիւններու պատգամաւորներուն մասնակցութեամբ:

## Հ.Բ.Ը.Մ.ի 110-ամեակը Լոս Անճելոսի մէջ

Շարունակուած էջ 1-էն

վայրի մէջ սարքուի, որպէսզի այցելուներուն ըստ պատշաճի հնարաւորութիւն տրուի մօտէն ծանօթանալու արուեստագէտներու ստեղծագործութեանց:

Միջոցառումի երկրորդ մասին մէջ գործադրուեցաւ պաշտօնական յայտագիր մը յարակից սրահին մէջ, որ նեղ կու գար բազմահարիւր հրաւիրեալներուն համար:

Յայտագիրն սկսաւ գեղարուեստական ծրագրով մը: Յաջորդաբար ելոյթներ ունեցան Անտրէ Մելքեան (ջութակ), Անահիտ Գրիգորեան եւ Նանոր Տէր Պետրոսեան, Հայկ Արսէնեան, Կրէկ Հազարեան եւ Լեւոն Աբրահամեան (դաշնամուր), Արմէն Քսաճիգեան (թաւ ջութակ) եւ Ալին Արուստամեան ու Ռազմիկ Մանսուրեան (երգ):

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հ.Բ.Ը.Մ.ի Արեւմտեան Ամերիկայի ատենապետուհի իրաւաբան Թալին Եագուպեան: Ան հակիրճ կերպով ներկայացուց Հ.Բ.Ը.Մ.ի ազգանուէր եւ հայրենանուէր առաքելութեան առաջադրանքներն ու իրագործումները սփիւռքի, Մայր Հայրենիքի եւ Արցախի մէջ:

Այնուհետեւ, հարցազրոյցի ձեւին տակ, ելոյթ ունեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նորանշանակ անդամ ծանօթ գործարար եւ բարերար Ռուբէն Վարդանեան: Հարցազրոյցը վարեց Թալին Եագուպեան:

Ռ. Վարդանեան դրուատեց դարերու ընթացքին հայ ժողովուրդի սխրագործութիւններն ու ստեղծագործական ներուժը, որոնց պատճառով առաջնային տեղ կը գրաւենք շատ մը բնագաւառներու մէջ: Ան նշեց նաեւ որ Տաթեւի աշխարհի ամենաերկար ճօպանուղին (թելեֆերիք) կառուցած մեր հայրենակիցները ի վիճակի են նաեւ այլ իրագործումներ կատարելու տնտեսութեան ու կեանքի այլ բնագաւառներուն մէջ: Զարկ տրուելու է նաեւ Արցախի հիմնահարցի լուծումին: Քանի որ Արցախի կորուստը նաեւ կորուստ մըն է Հայաստանի համար:

Միջոցառման աւարտին յատուկ պարգեւներու արժանացան Հ.Բ.Ը.Մ.ի կարգ մը նուիրեալ անդամներ, ձեռամբ Միութեան Կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ Սինան Սինանեանի եւ Ռուբէն Վարդանեանի:

## ՅԱՍՏՈՒԱԾ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐՈՒՆ

**ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ**

*Պահ մը կ՛ուզէի Աստուած ըլլալ:*

*Պիտի ժպտիք եւ զարմանալով հարց տաք.- ինչո՞ւ:*

*Պիտի ըսեմ.- որպէսզի պատասխանեմ յաճախ ինծի (Աստուծոյ) ուղղուած հարցումի մը:*

*Պիտի հարցնէք.- ո՞ր հարցումին կ՛ակնարկես Աստուած ջան:*

*Այն երգիչին, երգին եւ գալարուն շարժումներով ու կերկերուն ձայնով երգողներուն, որոնք չեն ձանձրանար կրկնելու.- «ո՞ւր էիր Աստուած, երբ խենթացած լքուեց մի ողջ ժողովուրդ»:*

*Ի՞նչ պիտի պատասխանէիր արդեօք.- պիտի հետաքրքրուիք բնականաբար:*

*Ուրեմն, իմ կարգիս հարց պիտի տայի.- դո՛ւն ո՞ւր էիր ո՛վ հայ մարդ, ո՞ւր էիր հայ ժողովուրդ ու հայ հաւաքականութիւն: Պահ մը մտածա՞ծ ես թէ ինչո՞ւ այդքա՜ն հեշտութեամբ եւ գլխիկոր ուղղուեցար կառափնարան, զանգուածաբար տարագրուեցար Տէր Զօր՝ Թախծադէմ ու սովալլուկ, բոկոտն ու անոք:*

***

*Արդարեւ, անձնական թէ ազգային կեանքի մէջ ինչ անպատասխանատու եւ թեթեւամիտ հնարք է սեփական ձախորդութիւն մը, գայթանք մը բարդել ուրիշի ճիտին. անմեղսունակ դուրս գալ եւ յանցաւորներ որոնել աջէն ու ձախէն: Այս պարագային՝ մեր ազգային ողբերգութեան համար մեղադրել զԱստուած եւ աներեսաբար յանդիմանել՝ ո՞ւր էիր Աստուած:*

*Հայկական Ցեղասպանութենէն 101 տարիներ ետք, տակաւին օդին մէջ կախուած կը մնայ մեծ հարցական մը.- ինչո՞ւ կը խուսափինք բացէիբաց մերկացնելու մեղքի այն բաժինը, որ եղաւ մերը՝ նախաեղեռնեան շրջանին: Ե՞րբ պիտի յանդգնինք պատրաստելու ցուցակը այն լրտեսներուն, մատնիչներուն, գործակալներուն, Իթթիհատի կամակատարներուն, որոնք ուղղութիւն եւ ցուցմունք տուին ջարդարարներուն: Կը համարձակիմ հոս արձանագրելու, որ իրաւ եւ նուիրեալ յեղափոխականներէ աւելի ունեցանք մեծ բանակ մը Թուրքին եւ քիւրտին գործը դիւրացնողներ. Աւելին՝ չէ պատահած որ կարդամ այդ ժամանակաշրջանին շուրջ գրուած գիրք մը, յուշագրութիւն մը, ուսումնասիրութիւն մը, ուր չյայտնուին զանազան գոյնի լրտեսներ եւ մատնիչներ: Թրքախօս մը պիտի ըսէր՝ մաշշալլա…: Ունեցանք ազգային առաջնորդներ, որոնք իրենց կեանքի վերջին րոպէին իսկ իրենց փրկութեան յոյսը դրած էին «ազնիւ եւ հայասէր» Թալաաթ փաշային վրայ. չէ՞ որ ան մի քանի բառեր հայերէնով կը պլպլար…:*

*Մարդիկ իթթիհատականներու հետ սիրաբանողները մոռցած, խաֆիէններու սեւ գործը անգիտացած, իրենց ցասումը անհամոզիչ կերպով կը ժայթքեն Աստուծոյ վրայ՝ ո՞ւր էիր Աստուած:*

*Կը թերթեմ «Եկեղեցին Հայկական» գմայլելի բանաստեղծութեան հեղինակին քերթուածները եւ ակամայ կ՛ապշիմ այն սլաքներուն համար, որ ան ուղղած է Աստուծոյ հասցէին.*

«Ըսէ՛ք, ով դուք, եթէ չէք զգուած ձենէ ու մենէ
Եւ կայ Աստուած մը եթէ քառսին վրայ մեր կեանքին,
Ըսէ՛ք անո՛ր թէ հերիք, ա՛լ այս պատիժն հերիք է…»:
(«Միջնորդութիւն». 1915)

«Ուրեմն, եղբայրնե՛ր, խնդա՛նք միասին
Խնդա՛նք Աստուծոյ ալ ժանտ երեսին…»:
(«Խնդանք Եղբայրներ». 1916)

«Ամպերուն մէջ կը կարծէր… եւ ահա ճիշդ այդ պահուն
Ոսոխ Աստուած մը անշուշտ՝ որ դարանած կը դիտէր»:
(«Ահաւոր Բան Մը Այնտեղ». 1916)

«Պիտի ըսենք,- «Մեզ դըժոխք, դըժո՛խք դրկէ՛ անգամ մ՚ալ.
Չէ՞ որ զայն լաւ կը ճանչնանք, զայն ճանչցուցիր մեզ շատ լաւ,
Եւ Թուրքերուն յատկացո՛ւր արքայութիւնըդ անբաւ…»:
(«Պիտի Ըսենք Աստուծոյ». 1917)

«Մարդոց չարիքը մեզի եւ քո՛ւ չարիքդ, Աստուա՛ծ իմ,
Պիտի գա՜յ օր մ՚ուր այլեւս պիտի կրնանք չյիշել,
Պիտի կրնանք մենք նորէն երգե՜լ, սիրե՜լ անարգել…»
(«Պիտի Մոռնանք». 1918)

«Մարդոց ոճիրը զանոնք զերդ մէյ մէկ սուր է դարբնած…
Դուն ջրդեղէ՛, կարծրացո՛ւր միայն զանոնք, կա՛րծր Աստուած…»
(«Որբերուն Ձեռքերը». 1923)

«Ինչպէս Աստուած է ստեղծիչն ալ չարին՝
Երբ դուն աշխարհն ու Ան ըզմեզ կը մոռնաք…»
(«Տաղ Արեւին». 1941)

*Բանաստեղծ Վահան Թէքէեան եւ ոչ միայն Վահան Թէքէեան, այլ բոլորս Աստուծոյ անուան առջեւ պիտակներ դնելէ առաջ՝ մեր բարկոյթը հարկ է ուղղենք մեր ազգակիցներուն, թէ՝ ո՞ւր էիք երբ մեր ծոցին մէջ կը փայփայէիք դաւաճաններ, դասալիքներ, ազգին քաջերը ծախողներու այնպիսի սողուններ, որոնց Թէքէեանի բարեկամ Երուանդ Օտեան կը կոչէր խաֆիէններ: Հայ արիասիրտներ աւելի պայքարեցան ներքին ցեցերու դէմ՝ քան արտաքին: Նեմեսիսը նախ հարուածներ հասցուց հայանուն գարշանքներու, որոնք Թուրքէն նուազ ստոր չէին՝ Արթին Մկրտիչեան, Վահէ Իհսանի, Արթուր Եսայեան, Միհրան Եազըճեան, Հմայեակ Արամեանց, Նշան Սէթեան եւ բազում ուրիշներ: Ուրեմն՝ ո՞ւր էիր հայ մարդ եւ ոչ թէ ո՞ւր էիր Աստուած:*

*Անհատական եւ յատկապէս հասարակական կեանքի մէջ կան իրարու օղակուած երկու երեւոյթներ՝ պարտականութեան ստանձնում եւ պատասխանատուութեան կրում:*

*Ի՛նչ դիւրին է պատասխանատուութիւն մը շպրտել ուրիշի ուսերուն, կամ Աստուծոյ ուսին: Այստեղ տեղին է մեր մտորումներուն միացնել Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսին մէկ քարոզ-յօդուածը: Արդարեւ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Մեծ Պահքի չորրորդ Կիրակին նուիրած է «Տնտես»ին:*

*Այս առթիւ ան 1918-ին կը*

*Շար.ը էջ 18*

## ԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՈՎԸ ՃԻՇԴ ՇԱՀԱԳՈՐԾԵՆՔ

**ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ**

*Երբ Սովետական Միութիւնը լուծուեցաւ եւ Հայաստան անկախացաւ, խանդավառ սփիւռքահայուն հայրենիքին օգտակար դառնալու տրամադրութիւնը դժբախտաբար բախեցաւ հայրենի մարդուն շահախնդրութեան հետ, որուն պատճառաւ սփիւռքահայ շատ մը տնտեսական կամ ճարտարարուեստական ներդրումներ վերջ գտան կամ կասեցուեցան, եւ այդպիսով ալ Հայաստան զրկուեցաւ Սփիւռքի մէջ յաջողած մարդոց փորձառութեամբ ստեղծուելիք գիտական ու տնտեսական վերելքէն, որ կրնար Հայաստանը դարձնել արդի եւ թեթեւ ճարտարարուեստներու կեդրոն շատ մը մարզերու մէջ, ինչպիսիք են Իսրայէլ, Սինկափուր եւ Զուիցերիա: Սփիւռքահայը իր գտնուած յառաջադէմ երկիրներուն՝ Եւրոպայի, Ամերիկայի, Գանատայի ու Աւստրալիոյ մէջ կը գործէր ու կը մրցէր աշխարհահռչակ ընկերութիւններու շրջանակներուն հետ եւ անկասկած պատրաստ էր իր անսահման կարելիութիւններով ու փորձառութիւններով Հայաստանը տնտեսապէս զօրացնելու ու զայն գիտական ու արհեստագիտական ընագաւառներու մէջ միջազգային կեդրոն դարձնելու: Հայը աշխարհատարած ներկայութիւն ունի՝ ինչպէս հրեան: Եւ եթէ Իսրայէլ ունեցաւ զգալի գիտական յառաջդիմութիւն օգտագործելով հրեայ սփիւռքի (diaspora) գործնական հմտութիւնը (know how) իր պետութեան հիմնադրութենէն ի վեր, ապա ի՞նչը կ՛արգիլէր (եթէ ոչ շահախնդրութիւնը եւ կաշառակերութիւնը ոմանց) որ Հայաստան նոյնը չընէր, օգտագործելով սփիւռքահայուն գործնական հմտութիւնը:*

*Կ՛ըսուի թէ Սովետական Միութիւնը արեւմտեան աշխարհին մէջ լրտեսներ գործի կը մղէր գողնալու համար անոր գիտական յառաջդիմութիւնը կամ գործնական հմտութիւնը: Այդպիսի լրտեսութիւն ընելու կարիքը չունի Հայաստան, որովհետեւ սփիւռքահայը պատրաստ է իր գործնական հմտութիւնը տալ Հայաստանի, եթէ հոն առիթ ու մթնոլորտ ստեղծուի եւ հայրենակերտումի գործը միայն պալատ ու եկեղեցի շինելով չտարուի:*

*Կ՛ըսուի նաեւ, թէ լաւ կատարուած գործ մը շուք ու պատիւ կը բերէ գործողին: Վերջերս շատ աղմուկ բարձրացաւ Սփիւռքի եւ հայրենիքի մէջ ընդդէմ Ռուսիոյ, որովհետեւ ոմանք զայրացած էին, որ ռուսը հայուն հարազատ դաշնակիցը ըլլալու դերին մէջ թերացած էր Արցախի վերջին բախումներուն ընթացքին: Արդեօք հարց տուի՞նք թէ ի՞նչ լաւ գործ կատարած էր մեր հայրենի իշխանութիւնը, որ վստահած ըլլար շուք ու պատիւ ռուսին մօտ: Եթէ ռուսը տեսած ըլլար գործնական հմտութեամբ ձեռք բերուած յաջողութիւնն ու հրաշագործութիւնը հայաստանցիի եւ սփիւռքահայու փոխադարձ գործակցութեան, եւ զգար թէ բան մը ունի օգտուելիք այդ հրաշագործութենէն, վստահաբար աւելի պաշտպան կը կանգնէր մեզի, ինչպէս կ՛ընէ Ամերիկան Իսրայէլի, տեսնելով անոր «լաւ կատարուած գործը»: Չի բաւեր հպարտ ըլլալ մեր «ասլան» զինուորին մարտունակ եւ զոհաբերող ոգիով: Ընենք այնպէս, որ մեր թշնամիներն ու բարեկամները յարգանքով վարուին մեզի հետ եւ հայ զինուորին մայրը պէտք չունենայ իր նահատակ հերոս զաւկին ցաւով տառապելու ու անոր յետ մահու տրուած մետալներով սփոփուելու:*

*Արցախի ճակատին վրայ վերջերս անհաւասար ուժերով մարտնչող եւ թշնամին ետ մղող մեր հերոս զինուորներու զոհաբերութեան ոգիին շուրջ հաւաքուած համազգային աննախընթաց պոռթկումը մեր ժողովուրդին, անգամ մը եւս ստեղծած է մթնոլորտ մը, որ կը յիշեցնէ հայ մարդու խանդավառութիւնը Հայաստանի անկախացման շրջանին: Ամէն հայ, աշխարհի մէջ ուր որ ալ գտնուի, վերանորոգուած տենդով եւ օգտակար դառնալու կամքով ու կորովով պատրաստ է կարծէք Արցախի ճակատին վրայ մօտէն ու հեռուէն իր մասնակցութիւնը բերելու բազուկով, հնարքով, գրիչով, մտքով, ցոյցով եւ դրամի ուժով:*

*ՀՅԴ-ն, որուն վերջերս մուտք ընծայուեցաւ ըլլալու հայրենի իշխանութեան շարքերուն մէջ, դրամահաւաքի բուռն արշաւի մը լծուած է, որպէսզի հոգայ հայրենիքի պէտքերը եւ «երես ճերմկցնէ» հայրենի իշխանութիւններուն մօտ: Սփիւռքին կողմէ եղած դրամահաւաքը, իր բոլոր դրական ստորոգելիներով, ոչինչ պիտի փոխէ Հայաստանի մեր ժողովուրդի կեանքէն: Արմատական փոփոխութիւն է պէտք այնտեղ, որպէսզի վերջ գտնեն շահախնդրութիւնն ու կաշառակերութիւնը իշխանաւորներուն, եւ անոնց հայրենասիրութիւնը պէտք է կեդրոնանայ ստեղծելու առիթ ու մթնոլորտ, որպէսզի Սփիւռքը կարենայ գոնէ այս անգամ իր գործնական հմտութիւնը փոխանցելու եւ կիրարկելու Հայաստանի մէջ: Եւ եթէ կը հաւատանք վերջապէս որ սեփական ուժերով միայն կարելի է սահման պաշտպանել ու հայրենիքի համար շահեր ապահովել, այն ատեն համազգային առողջ կեցուածք ցոյց տալու կողքին, խօսինք մեր տկարութիւններուն մասին եւ փորձենք շտկել զանոնք, որովհետեւ «լեզուն տրուած է քեզ, որ սրտիդ մէջ ինչքա՜ն ազնիւ խոհեր ունես ասես անվախ ու անվարան, ոչ թէ սրտիդ մէջ ամբարես կամ բարբառես կիսաբերան… ու շիրմաքար դարձնես լեզուդ»:*

*Արցախի ճակատին վրայ վերջերս նահատակուած մեր ժողովուրդի հերոս զաւակները բոցավառեցին մեր խանդավառութիւնը՝ մասնակից դառնալու հայրենակերտումի լուրջ աշխատանքին, գործնապէս եւ ոչ երեւութապէս: Վերանորոգուած այս ազգային կորովը ճիշդ օգտագործենք եւ զայն չվատնենք պահպանելով նախկին վիճակը (status quo):*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

# ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ «ՊԱՊԻԿԸ ԿԱՐԴԱԼ ՉԻ ԳԻՏԵՐ» ՀԱՏՈՐԻ ՈՂՋՈՒՆԱՀԱՆԴԷՍԸ



*ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ*

*Հինգշաբթի, 28 Ապրիլ, 2016-ի երեկոյեան Լաքրասանթայի «Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Ողջունահանդէս-Շնորահանդէս, նուիրուած Ամերիկահայ կեանքի հրապարագրական եւ կրթական բնագաւառներէն ներս ազգային ու հանրային բեղուն գործունէութիւն ունեցող բազմավաստակ դաստիարակ, մտաւորական եւ գրական մշակ Գէորգ Պետիկեանի՝ «Պապիկը Կարդալ Չի Գիտեր» Հատորին:*

*Տէրունական աղօթքով սկիզբ առնող շնորահանդէսին բացման խօսքը կատարեց Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ.Քիրազեան:*

*Քահանայ հայրը ողջունեց պատուական հիւրերն ու գրասէր ունկնդիրները, բարի գալուս մաղթեց բոլորին այս յիշարժան երեկոյին առթիւ: Ներկայացնէ ետք գիրքին հեղինակը, ան նշեց թէ հայ ժողովուրդի անցած դարաւոր ուղին եւ պատմութեան ընթացքը ցոյց տուած են, որ հայկական մշակոյթը դարձած է անբաժան ուղեկիցը, ինքնութեան գրաւականը, ազգապահպանման երաշխիքը եւ յուսահալի միակ պաշտպանը, ճակատագրի բերումով թափառական դարձած հայ ժողովուրդին: «Մշակոյթը որպէս անաչառ եւ անկողմնակալ հայելի, լաւագոյնս կարտացոլէ տուեալ ժողովուրդի հոգեմտաւոր արժանիքները»,- ըսաւ քահանայ հայրը:*

*Ներկայացնելէ ետք սփիւռքահայ մտաւորական եւ գրող Գէորգ Պետիկեանի սրամտութեամբ ու սրատեսութեամբ համեմուած հատորը, Տ. Ղեւոնդ Քհնյ.Քիրազեան եզրափակեց իր խօսքը ըսելով,- «Իւրաքանչիւր լոյս տեսած հայ գիրք ունի իւրայատուկ ոգի եւ փոխանցելիք նոր պատգամ եւ հարկ է դարձնել զայն մեր օճախներու մնայուն եւ ցանկալի անդամը»:*

*Ապա, օրուայ հանդիսավար Սարգիս Մահսէրէճեան ներկայացուց Տօքթ, Ալիս Քիւրիւմեանը: Հեղինակին նախկին ուսուցչուհի ու դաստիրակ՝ Տոքթ. Քիւրիւմեան ընդհանուր բացատրական մը տուաւ գիրքին մասին, որ անձնական պատահարներու, իրավիճակներու եւ ապրումներու վրայ յենուած գործ մըն է ու արտացոլումը՝ հայ ժողովուրդի ցաւին, կսկիծին ու մղձաւանջին: Բանախօսը ըսաւ, որ հեղինակը հիւմրոտ նկարագրի գիծերուն հետ համընկնող, հայկականութիւն բուրող, սուր երգիծանքի վերածելով իր հատորը, թոռնիկիմ կամ տիկնոջը հետ երկխօսութեամբ եւ այլ կերպարներու միջոցաւ հրամցուցած է ընթերցողին հետաքրքրական, անկեղծ, պարզ ու մատչելի ոճով գիրք մը:*

*Գէորգ Պետիկեան իր այս արձակ գործերու հաւաքածոյին մէջ լուսարձակի տակ առած է սփիւռքի մէջ ապրող հայ ժողովուրդի աղաղաղուած ազգային դիմագիծը, օտարամոլութիւնը, ազգապահպանման առօրեայ պայքարը: Ան ազգերու այս խառնարանին մէջ իւրայատուկ ինքնատիպութեամբ համադրած է ազգայինը, տեղականը եւ միջազգայինը իր մանկութեան օրերէն մինչեւ այս օրերը: Գիրքը գրողին ապրումներու իսկական վկայութիւն է, թերթատելով զայն կարելի է շօշափել հեղինակի անսահման սէրը հայրենիքի, հայերէն լեզուի, մեծասքանչ այբուբենի եւ մեր նախահայրերու կողմէ արեան գնով ու զոհողութեամբ մեզի շնորհուած ազգային ժառանգութիւններուն:*

*«Պապիկ Քու Քաղաքիդ Անունը Ինչ է» գրութեամբ, հեղինակը անձնատուր կ'ըլլայ իր յիշողութիւններուն, յայտնելով անսահման սէրը իր ծննդավայրին՝ սիրելի Հալէպին, ուր կեանքը իր կշռոյթը կորսնցուցած է այսօր, ու սեւ ամպեր պատած անոր երկինքը, պատերազմի պատճառաւ մահ ու սարսափ սփռելով ամէն կողմ:*

*Պետիկեան վերլուծումներ կ'ընէ թէ «Ինչու Ուրախ Չենք Կամ Ինչու Տխուր Ենք» վերնագրով գրութեան մը մէջ, ակնարկելով մեր առօրեայ ընտանեկան, քաղաքական եւ նիւթական մտահոգութիւններուն ու տագնապներուն:*

*192 էջերու վրայ տարածուող իւրաքանչիւր պատմուածք կը փոխանցէ սրբազան պատգամ մը ընթերցողին, որուն բեմականացման բաժինը արհեստավարժօրէն հրամցուց ներկաներուն հանրածանօթ բեմադրիչ, դերասան Սեդրակ Պրոնզեանը, փոխանցելով վայելքն ու հաճոյքը հատորին:*

*Շնորհակալական եւ երախտագիտական իր զգացումները արտայայտող խօսքով հանդէս եկաւ գրքի հեղինակը, սէր ու յարգանք փոխանցելով ներկաներուն ու բոլոր անոնց, որոնք սատար կանգնեցան սոյն գիրքի հրատարակութեան, ինչպէս նաեւ օրուայ շնորահանդէսը կազմակերպողներուն ու հանդիսավարներուն, սրահի մէջ գտնուող ներկաներուն, որոնք անաղմուկ եկած էին քաջալերելու ու տէր*

*Շար.ը էջ 18*

# ՀՈԳՇ. Տ. ՍԱՍՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՋՄՐՈՒԽՏԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԸ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ



*Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան Լաս Վեկասի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Նոր Հոգեւոր Հովիւ նշանակեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբան՝ Հոգշ. Տ. Սասուն Ծ. Վրդ. Ջմրուխտեանը:*

*Հայր Սուրբը ծնած է 1954ին, Պէյրութ, Լիբանան: Հայեցի իր կրթութիւնը ստացած է իր ծննդավայրին մէջ: Երիտասարդ տարիքին Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմէն ներս ծառայած է որպէս Սարկաւագ եւ իր բարձրագոյն ուսումը ստանալէն ետք, մեկնած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ 1985ին Մայր Տաճարին մէջ Կուսակրօն Քահանայ Ձեռնադրուած եւ Օծուած է Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի ձեռամբ:*

*- Հազիւ մէկ շաբաթ է, որ հոս եմ, համերգ ունիմ Սեպտեմբերի վերջը, Մարիետան խումբիս անդամներուն հետ համերգէն մէկ շաբաթ առաջ պիտի գայ, ամսոյն 20-ին:*

*- Է՜, դո՞ւն ինչու այսքան կանուխ եկեր ես, ան ալ այս տաք օրերուն.*

*- Թերեւս պիտի զարմանաս, բայց ըսեմ՝ Հայաստանի ծիրանը վայելելու համար.*

*- Ի՞նչ, ծիրան ուտելու համա՞ր:*

*Այս ասելիս այնպիսի մի վարակիչ խնդուք բռնեց խեղճ Սիլվիի կոկորդը, որ անցող-դարձող մեզ էին նայում:*

*- Չէ՛, չէ՛ Սիլվի, ուտե՜լ չէ, սխալ ես, վայելե՜լ, վայելե՜լ-, ուրիշ է ուտելը եւ բոլորովին տարբեր վայելելը, հանգստացիր բարեկամս, հանգստացիր, մի խնդար,,,*

*- Իրաւունք կու տամ քեզի, խնդուքն աւարտելուց յետոյ ասաց Սիլվին. -իրաւ է Հենրիկ. Հայաստանի ծիրանին պէս աշխարհիս մէջ ոչ մէկ տեղ չկայ, -օ՜,օ՜, Հենրիկ, բարեկամս եկած է, նայէ՛, ինծի կը փնտռէ, պիտի երթամ, կը ներես, բա՜յ-, Ամերիկա կը տեսնուինք, բա՜յ:*

*Մէկ էլ, երկու քայլ չարած դէպի իմ սեղանը՝ երիտասարդների մօտ, դէմս ելաւ կորաքամակ, ժամանակից շուտ ծերացած, ամառուայ այդ տապին գլխաշորով փաթաթուն մի կին.*

*- Կը ներէք ընկեր ջան, ոնց տեսնում եմ, դուք տուրիստ էք-*

*- Այո, ի՞նչ կայ, ի՞նչ ես ուզում:*

*- Մօտ արի, ականջիդ բան եմ ասելու:*

*Բնականաբար, հետաքրքրութիւնից դրդուած ականջս մօտեցրի խօսակցիս բերանին.*

*-Էն մատաղ աղջկան տեսնո՞ւմ ես, աջ ձեռքն ուղղելով մի հինգ մետր մեզնից հեռու կանգնած մանկամարդ սիրունիկ աղջնակին, - ասաց խռպոտ ձայնով տիկինը:*

*- Հա՜, տեսնում եմ, իսկ ի՞նչ կայ որ:*

*- Էն կայ որ պարոն ջան, էդ աղջկաս կարաս տանես, եւ ինչ որ ուզես, կարաս անես հետը:*

*Մէկ վայրկեանում արիւնը սառեց երակներումս: Չիմացայ ինչ պատասխանել: Յետոյ, միանգամից սթափուած, բռնեցի տիկնոջ ականջից ու գրեթէ բղաւելով ասացի.*

*-Շուտ հեռացիր այստեղից, թէ չէ ոտքերիս տակ կ'առնեմ քեզ հիմա:*

*Մինչ շուրջիններս հարցական հայեացքներն ինձ ուղղած, ով գիտէ ինչ եզրակացութիւններ էին անում այդ արտասովոր միջադէպից, ես արագօրէն շարժուեցի դէպի իմ սեղանը՝ սուրիացի երիտասարդ զոյգի մօտ.*

*- Կը ներէք տղաք ձեզի մինակ ձգելուս համար:*

*- Վնաս չունի պարոն, բայց դուք տեսակ մը այլայլած էք, ի՞նչ եղաւ ձեզի: Հոստեղէն շատ ուրախ, զուարթ գացիք ձեր բարեկամին քով:*

*- Լուրջ բան մը չէ տղաս, դուք, վստահ եմ, տեսաք, որ կին մը մօտեցաւ ինծի հոս գալուս ատեն, անհաճոյ հարց մը ուղղեց, այդչափ, ուրիշ բան մը չի կայ, լուրջի մի առնէք:*

*Այս պատասխանս, վստահ եմ, չգոհացրեց զոյգին: Նրանց իրար նայելն ու խորհրդաւոր ժպտալը խօսուն փաստն է իմ ասածի:*

*- Ինչպէս կ'ըսեն՝ անցած ըլլայ պարոն: Բայց դուք չըսիք ձեր անունը, միայն լսեցինք քիչ առաջ, որ ձեր ընկերուհին ձեզի Մայեստրօ որակեց, ըսել է արուեստագէտ էք, ո՞վ կ'ըլլաք-*

*-Իրաւունք ունիս Վարդգէս, այո՛, արուեստագէտ եմ տղա՛ս: Մականունս Անասեան է, պարզապէս Մայեստրօ ըսէք ինծի, անունս ալ Հենրիկ է: Մոռնանք, ես սկիզբէն ըսի, որ մտահոգ տեսք ունիք, խօսեցէք նայիմ, ինչ կայ, ինչ չկայ: Շատ լաւ գիտենք, թէ ինչ կ'անցնի կը դառնայ Միջին Արեւելքի, ի մասնաւորի Սուրիոյ մէջ:*

*- Քիչ առաջ մայեստրօ, դուք կարծիք յայտնեցիք թէ Սուրիոյ հայերը ապահով եւ մնայուն կեանք ապահովեցին իրենց համար հայրենիքի մէջ: Թերեւս ոմանց համար այո, այդպէս է, բայց շատերուն եւ մեզի համար բնաւ ալ այդպէս չէ պարագան, -ասաց Վարդգէսը եւ շարունակեց,- Ես ոսկերիչ եմ եւ ճանչցուած մասնագէտ: Հոս, ոսկերչական շուկայի մէջ մէկու մը քով գործի անցայ: Մարդը ըսաւ՝ «մէկ-երկու ամիս ձրի պիտի աշխատիս, փորձաշրջան է»: Երեք ամիս է, մարդը չէ վճարած ինծի, հազարումէկ մահանաներով, այսօր-վաղը ըսելով ինծի խաբեց, դրամներս կերաւ: Մեր ունեցած դրամներն ալ լմննալու վրայ են: Չենք գիտեր, թէ ի՞նչպէս պիտի վճարենք զալիք ամսուան վարձքը:*

*Շար.ը էջ 19*


Հայրենասիրական Երգերու Երեկոյ

կազմակերպութեամբ՝

ՍԴՀԿ Փարամազ մասնաճիւղի

Եւ

Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան

Մասնակցութեամբ՝

Ազգային Երգերու Մեկնաբան ԱՌՆՕ-ի

Տեղի կ'ունենայ

Շաբաթ, 14 Մայիս-ի երեկոյեան ժամը 8-էն սկսեալ

ՀԿԲՄ-ի »Կարօ Սողանալեան« սրահէն ներս

1060 North. Allen Ave .Pasadena Ca 91104

Ձեռնարկի Հասոյթը Ամբողջութեամբ Պիտի Յատկացուի Արցախի Հայոց Բանակին

Համադամ ճաշեր

Հեռաձայն 626 797-7680

Տոմսեգին 35 Տոլար

# «ԳԱՐՈՒՆ ա, ԾԱՂԻԿ Է ԱՐԵԼ«...

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

«Գարուն ա», գարնան արարչական լոյս է իջել »Արմինա Լեռնաշխարհին»: «Հայկ Համաստեղութեան» հայոց հին աստուածների տաճարից Մայր Անահիտ դիցուհին է եկել «Արմինա Լեռնաշխարհ», բուռ-բուռ ծաղիկ փռել հայոց լեռների լանջերին, հայոց դաշտերին: Արամազդի դուստր Անահիտը, մայրանալու երկունքի լոյս է ցանում այգիներում փթթելու պատրաստ ծառերին: Նրա արարչական խինդով պայթած ծառերն են ծիծաղում, հազար գոյների լոյս ճառագում, ծաղկի լոյսով է արբենում հայոց Արմինա հէքիաթային աշխարհը:

«Գարուն ա» մտե՞լ ես ծաղկած այգիներ, տեսե՞լ ես ծիածանացած ծառերը, ունկնդրե՞լ ես նրանց ծաղկած լոյսի համանուագը: Քու հոգին էլ ծաղիկ չի՞ դարձել, քու հոգին էլ մայրական սիրոյ հրճուանքով չի՞ խայտացել: Քու երկիրը յափշտակած անօրէն մարդիկ արդեօք մտե՞լ են նախնիների Մայր Դիցուհու արարման խանդաղատանքով պայթած ծաղկած այգիներ, չէ, եթէ այնտեղ լինէին, ունկնդրէին նրանց համանուագը, նրանց հոգիներում էլ արարում ծաղկած կը լինէր: Զօր, անօրէն, անբարոյ մարդիկ:

Մեհեան է ծաղկած այգին, մեհեան բաց երկնքի տակ, ոչ թէ փակ ու մութ խորշ: Աղօթո՞ւմ ես այնտեղ, չէ, բնութեան արարչութեանը չեն աղօթում, սքանչանում են նրա հէքիաթով, նրա մայրացման խորհուրդով, նրա լոյսով, նրա արարումով: Լո՛յս, կեանքի առեղծուած, ամպերում իրար դէմ կռուի ելած հիւլէների պայթիւնի, երկնքում իրար փարելու հրճուանքի պոռթկումն է այն: «Լոյսի մի շողը, մութ յաւիտեանն արժէ», խօսել էր «Հեթանոս երգի» բանաստեղծ Վարուժանը, ինքն էլ Արմին-հայ աստուածների Աշտիշատ աւանի Վահագնի Վահէ-Վահեան տաճարի քուրմ:

Ծաղիկների բոյլերի մէջ Մայր Անահիտի մայրութեան ոգու լոյսի խորհուրդն է, երկունքի հրավառութիւն է այնտեղ: Ծաղկունքի թերթիկներն են փրփրում, հովիկների թեւերին յենած պար բռնում, գնում մայրութեան հէքիաթը աւետելու, ընկնում հողին, արեւի համբոյրի ժպիտ շաղում նրա երեսին:

«Գարուն ա» բանաստեղծներն են գարուն դառնում, նրանց հոգիներում գարնանային արարչութեան ջահեր են վառւում, որոնց լոյսից բանաստեղծութիւն է ճառագում: Բանաստեղծներ, մարդկանց հոգիներին լոյսի անձրեւ են շաղում, գարնան նման հազարհազար տաղերի համազարկ զարկում: Իրենց լեռների լանջերից ծաղկունքի փունջեր կապած՝ գնում բարձրանում Ողիմպոսի գագաթ, գինով լի բաժակներ զարկում բանաստեղծութեան ներշնչանք պարգեւող մուսաների ու նրանց եղբայր Ապոլլոնի հետ, բաքոսուհիների գինարբուքի խրախճանքի տօնահանդէսներին հեթանոսական հրճուանքով արբենում:

«Գարուն ա» Արամազդի որդի, Միհր արեւ աստուածն է ժպտում Արմինա-հայ լեռնաշխարհին: Լոյսով վառուած ժպիտ է ցանում արտերի ցորեանի ծովակների ալեակներին, իր սրտի տաք շունչն է հոսում շէներին: Իրենց թեւերը դէպի արեւ տարած ծառերը, նրա լոյսի կրակն են ըմպում, որ կանաչ յուռթէն, որ այնտեղ ծաղիկ պայթի: Սպիտակ պատմուճան հագած լեռների ձիւնոտ գագաթներն են նրա լոյսի շողերից սարսռում: Նրա ջերմ համբոյրից արտասւում են լեռները, արցունքոտ ջրերի շիթերն են ընկնում հողին, առուակներ եղած ուրախ քրքիջով հոսում հեռուներ: Լեռների հողի շունչից, ձիւնէ պատմուճաններն են պատռում հազար-հազար գոյների ծաղիկներ, ձնծաղիկներ, փրփիրոն ծաղիկներ: Մանկական մատներով փորել եմ Մուսաների Լեռան լանջերի ձիւնը, ձնծաղիկ եմ հանել հողից, փնջեր արած եկել փարել մօրս, մեր աշխարհի գարունը նրան աւետել: Ձնծաղիկների ծաղկաբոյլերի թերթիկներից լոյսի հազար գոյնի երանգներ են ցոլում, նրանց սրտերից աստղերի հմայքն է պայթում: Ասում են, որ Արմին-հայերի Աստղիկ Դիցուհին ամէն գարնան գալիս է հայոց լեռներ, ձնծաղիկների ծիածանացած թերթիկներ քաղում, սաւառնում հայոց շէների վրայ, ափերով այն ներքեւ ցանում, որ մայրերը այդ ձիւնոտ ծաղիկների նման փթիթ դուստրեր ծնեն, ահա ինչու են Արմին-հայերի աղջիկները այդքան սիրուն-սիրուն, հրաշագեղ Աստղիկի նման սիրուն-սիրուն:

«Գարուն ա» հայոց աշխարհի հողն է արեւ աստուած Միհրի լոյսից վարարում: Ռանչպարներն են հանդերում, հողն է տաք-տաք շնչում, նրանք ափերով այն վերցնում են, տանում երեսներին, համբոյր շաղում նրա տաքուկ դէմքին: Հողի պաշտամունք է հայոց աշխարհում, ռանչպարների սրտերից պաշտամունքի ոգի է ծորում նրա դէմքին: «Հայրենի», «Մայրենի» են կոչել այն, յաւիտեան «Թեթեւ» ննջում նրա գրկում, մինչեւ որ փոքր Մհեր դուրս ելնի ժայռի սրտից՝ յարութիւն պարգեւի արդարներին: Իրենց յափշտակուած աշխարհից մի փշուր հող են տներ բերում, աղօթք մրմնջում այնտեղ հոսած նախնիների խունջանքին, նրա պաշպանութեան մարտերում նահատակուած արեւորդիների արեան զոհաբերութեանը:

«Գարուն ա», Ծովինար աստուածուհին է հայոց աշխարհին ջուր վարարում, լեռների լանջերից ջուր է յորդում, նրանց սրտերից աղբիւրներ են պայթում: Արմին ցեղի դիւցազն Անդրանիկը, Սասուն աշխարհի Մարութա սարի աղբիւրից պայթած սպիտակ ձին սանձած՝ ճակատել թշնամուն: Ծովինարի արարած ջուրն է հոսում հայոց աշխարհի դաշտեր, կեանք պարգեւում հողին: Ջուրը կեանք է, յաւերժութիւն է: Երկիր մոլորակի եւ տիեզերքի միլիոն-միլիոն աստղերի շուրջ պար բռնած երկրների՝ կեանքի արարման առեղծուածն է: Աստուածացած տիրուհի Ծովինարը հէքիաթ է, ինքը »Ջրածին», ինքը ջրից յղիացած, ինքը ջրում ծնել Սանասար, Բաղտասար որդիներին, ինքը տիեզերական հեռուներից ջուր անձրեւում: Սասնայ Մհերն է իջել ջրեր, հեծել թամբած «Քուռքիկ Ջելալին», կապել «Թուր Կեծակին», ջրից թռել, ճախրել դէպի արեւ: Քուռկիկ Ջելալին էր կանչել՝ «Ո՞ւր ես տանում ինձ, կը գնամ արեւ... կ'այրեմ քեզ նրա կրակում»: Մհերն էր իջել նրա իրանի տակ, կանչել. «Չես կարող ինձ այրել, տա՛ր ինձ դուշմանի դէմ կռուի»:

Գարնան արեւ-անձրեւին, իմ հայրենի երկրի ծաղկազարդ այգի ելել, ունկնդրել նրա համանուագը, դիտել նրա հեւքից ծաղկած ծառերի ծիծաղը, մանուկ հոգու խռովքով շոյել ձիւնի տակից պայթած աշնանային ցորեանի կանաչ-կանաչ ծիլերը: Դո՛ւ էլ գարնան անձրեւին դո՛ւրս արի, նայի՛ր վազող ջրերին, այն նախնիներիդ ջրի պաշտամունքի Ծովինար աստուածուհին է ընծայ բերել քու երկիր, ունկնդրիր նրա հոգապարար երգի համանուագը, դու էլ նրա հետ երգիր ռանչպարների հօրովելները, տե՜ս, տե՜ս սիրտդ ինչքան պիտի վարարի նախնիներիդ սիրոյ սարսուռներով:

«Գարուն ա, ձիւն է արել»: Չէ Վարդապետ, հայոց աշխարհը «ձիւն չի արել»: Վարդապետ, այլեւս «կարմիր» ձիւն չի գայ, «Գարուն ա, ծաղիկ է արել» հայոց լեռնաշխարհը, Մայր Անահիտը, գարուններին ծաղիկ է փռում հայոց հանդերին, լեռների լանջերին, որ «Հայ» ալուան աղջիկներ այնտեղ «Համբարձում Եայլա» տօնախմբեն, հայոց գուսանների տաղերը հնչեն, որոնք հովիկների թեւերին յենած գնան աշխարհին աւետեն հայոց ու նրանց երկրի հրաշափառ վերածնունդը: Չէ Վարդապետ, հայոց աշխարհի ընդերքի հազար գոյնի քարերից՝ հայոց մայր ոստանը, շէները «Կրակէ շապիկ» են հագել, հայերի ակնեբից ծիծաղի արցունք է հոսում:

Չէ Վարդապետ, հանգիստ ննջիր մայրենի հողում: Հայոց հին աստուածները տիեզերական իրենց տաճարից նորէն աստղ են ճամբել հայոց լեռնաշխարհի երկնակամար, լոյսի կրակ է հոսում նրանց սրտերին, զէնք են վերցրել, կռուի են ելել: Չէ, այլեւս չեն թողնի, որ «Կարմիր» ձիւն գար հայոց լեռնաշխարհին: Հայ մշակները քու հօրովէլներով հողն են ակօսում, սերմնացանները ցորեան են շաղ տալիս հողի երեսին, այգիներում ծաղկի ծիածան կապած ծառերի հէքիաթ է, հայոց աշխարհի մարդիկ գարուն են դարձել:

«Գարուն ա»: Գնում էինք Արարատին նայելու, կանգնում վիրապի բլուրին, դիմացը հայոց լեռնաշխարհի սրտից վեր խոյացած Արարատ-Մասիսներն են: Արեւաճեմ սպիտակ գագաթից ձիւնոտ վարսերն էին շեղջ-շեղջ իջնում Երասխ-Երասխի ջրերին: Անչափ դիտում էինք հայոց լեռնաշխարհի սրտից յառնած լեառնը: Նրա արարչական ոգին, Արմինա երկրի «Աստուածամարդ» Հայկի զարմից արեւորդիների հոգիներին անաձնական սիրոյ լոյս է յորդում: Ինչո՞ւ է լեառն այդ ոգի ժայթքում, ինչո՞ւ է նրա «խորհուրդ-խորինը» շանթում «Ար» արեւ աստուծոյ որդիների հոգիները: Նրա շուրջն էր ծաղկել մարդու երազային աշխարհը՝ Եդեմ-ը, նրա ստորոտին նորէն «Կեանք», «Մարդ» էր ծաղկել: Բարեպաշտութեան, հողի պաշտամունքի, արարչութեան լոյս էր այնտեղ, Աստուածների անհատնում բարիք, խնդութիւն, առատութիւն էր:

«Գարուն ա»: Արարատ, քաբեղէն սիրտը հայոց աշխարհի, ձեռքերնիս երկարում էինք, որ հպենք նրա անուշ դէմքին, ձնծաղիկ քաղենք նրա ձիւնոտ հողից, որ տանէինք Վահագնի ծնունդին, ափով ձիւն ժողովէինք... հիւսիսի տիրակալի փռած երկաթ փշերն էին ծակում մատներնիս: Հիւսիսից մարդիկ եկել, քարէ սիւներ դրել հայոց աշխարհի հողին, փշէ լարեր կապել նրա ճակատին, մայր գետի ջրերին: Լացում էր Արարատը, ձիւնոտ արցունքները առուակ-առուակ հոսում Երասխի ջրերին, վշտից փրփրած զարկում ափերին, գնում Մարաստան երկրի արտերին, հանդերին:

Բլուրի ստորոտին, հայոց նոր հաւատքի տաճար է, նրա գմբէթի գլխին իրենց արիական ցեղի արեւի լոյսի նշան՝ խաչ է: Հայոց նախնիները, իրենց հին աստուածների հաւատքի տաճարները՝ Միհր աստուծոյ անունով մեհեան են կոչել: Սպաննեցին իրենց բարեպաշտ հին աստուածներին, փլեցին նրանց հաւատքի փառաբանման տները: Նրանց լացող վէմերով նոր հաւատքի տաճարներ պատեցին, ցեղակից յոյներից փոխ առած «Եկեղեցի» անուանեցին: Եկեղեցի էին պատել բլուրին: Խորը վիրապ կար այնտեղ: Աւանդել են, որ այնտեղ էր տասնըհինգ տարիներ գոյատեւել Պարթեւաց ցեղից, Արշակունի տոհմի արքայասպան Անակ իշխանի որդի՝ Սուրէնը: Գրիգոր դարձած եկել հայոց աշխարհ, գինուորագրուել հայոց բանակ, տոհմի մե՞ղքը քաւելու, թէ՞ դաւելու:

Հայոց արքայ Տրդատն էր այդ վիրապում բանտարկել Սուրէն-Գրիգորին, թշնամու դէմ տարած յաղթանակի պատւին իր պաշտած աստուածներին, Մայր Անահիտին ծաղկեպսակ չմատուցանելու համար: Հայոց արքաները, օրինախախտների, յանցաւորների նկատմամբ մահուան վճիռներ չէին արձակել, բանտարկել եւ անշուշտ նրանց կերակրել էին: Այդ բլուրը՝ իրենց նախնիների Արմինա երկրի լքուած բերդ էր եղել՝ վերածուել բանտի:

Արեւմուտքում կրթութիւն ստացած իմաստուն Տրդատ Գ. Արքան, տարբեր հաւատքներ դաւանող երկու սահմանակից կայսրութիւնների ցեղերին ու մշակոյթներին չձուլուելու համար, մտադրուել էր իր թագաւորած երկիրը «Քրիստոնեայ» նոր հաւատքին առաջնորդել: Հարիւր-հարիւր տարիներ առաջ, նրա առաքեալները հասել էին հայոց աշխարհի հարաւ, քարոզել էին իրենց հաւատքի ուսմունքը: Տրդատ արքան, այդ ուսմունքում նկատել էր նաեւ իր նախնիների Միհրական տիեզերական հաւատքի բարեպաշտութեան ու սիրոյ լոյսը: Հազար-հազար տարիներ իրենց փոխանցուել էր նախնիների աւանդութիւնը, որ հայոց աստուածները իրենց երկրի հերոս, քաջ, առաքինի առաջնորդներն էին եղել, այնքան արդար ու սիրելի, որ նրանց աստուածացրել էին, ինչպէս Արայ-ին, Հայկ-ին, Միհր-ին, Տիր-ին, Վահագն-ին, Վանատուր-Ամանոր-ին, Անահիտ-ին, Ծովինար-ին, Աստղիկ-ին, Նանէ-ին, պատերազմներում յաղթանակած Վահագնին պատկերացրել էին բոցերից յառնած, նրանց իւրաքանչիւրին փառաբանել էին բնութեան հէքիաթի իմաստութեան տարբեր երեւոյթներով: Տրդատ արքան պատժից ազատել էր Գրիգորին, հրամայել հայոց երկրում օտար Աստուծոյ Որդու հաւատքի ուսմունքը դաւանել: Այդ ինչպէ՜ս եղեւ, որ այդ իմաստուն արքան դաւեց Արմինա երկրի նախնիների հաւատքին: Սպաննեցին այն, սպաննեցին իրենց նախնիների աստուածացած առաջնորդների ուսմունքը, սպաննեցին իրենց հազար-հազար դարերի երկ-

Տար.ը էջ 19

## ԽԵԼԱՑԻ ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԷ՞Ս ԿԸ ԽՕՍԻՆ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ՈՉ ՀԱՃԵԼԻ ՄԱՐԴՈՑ ՀԵՏ

*1. Անոնք կ’ընդունին, որ ամէն մարդ չի կրնար հաճելի թուիլ իրենց.* Դուք կեանքի մէջ անպայման կը բախիք այնպիսի մարդու, որ բացարձակապէս կ’ունենայ հակադիր տեսակէտ:

Խելացի մարդիկ կը հասկնան ատիկա: Անոնք նաեւ կ’ընդունին, որ հակամարտութիւնները կամ տարաձայնութիւնները կրնան նոյնիսկ օգտակար ըլլալ՝ ի յայտ բերելով կարծիքներու տարբերութիւնը: Եթէ ոեւէ մէկը հաճելի չի թուիր ձեզի, ատիկա բոլորովին չի նշանակեր, թէ ան վատ մարդ է: Դուք պարզապէս տարբեր կարծիքներ ունիք որոշ բաներու մասին: Երբ դուք ընդունիք, որ անկարելի է հաճելի թուիլ բոլորին՝ ատիկա կ’օգնէ ձեզի լսելու ուրիշին կարծիքը:

*2. Անոնք համբերատար են այն մարդոց հանդէպ, որոնք իրենց համար հաճելի չեն.* Ի հարկէ, կարելի է սուր եղանակով արձագանգել ձեզի համար տհաճ մարդու որեւէ գործողութեան, ջղայնանալ իւրաքանչիւր մանրուքէ, բայց ջանացէք քիչ մը աւելի հանդուրժող ըլլալ: Շփուեցէք այն մարդոց հետ, որոնք չեն վախնար վէճէն: Նման մարդիկ մարտահրաւէր կը նետեն կամ կը սադրեն ձեզի, եւ ատիկա կ’օգնէ հասնելու նպատակին: Յիշեցէք, որ դուք ալ կատարեալ չէք, բայց շրջապատը կը հանդուրժէ ձեզ:

*3. Անոնք քաղաքավար են.* Անկախ ոեւէ մէկուն հանդէպ ձեր զգացումներէն, մարդը ամենայն հաւանականութեամբ ձեզի հանդէպ տրամադրուած պիտի ըլլայ ճիշդ այնպէս, ինչպէս դուք՝ անոր հանդէպ: Եթէ դուք կոպիտ էք, ամենայն հաւանականութեամբ՝ իբրեւ պատասխան կոպտութիւն կը ստանաք: «Պահեցէք ձեր նշաձողը» եւ քաղաքավար եղէք՝ թոյլ չտալով, որ յոյզերը յաղթեն ձեզի:

*4. Անոնք կը հասկնան, որ ամէն մէկը ինքն իր ոճով կը վարուի.* Երբեմն մենք չափէն աւելի բան կ’ակնկալենք շրջապատէն: Զես գիտեր ինչու, եսասիրաբար կ’ենթադրենք, թէ ուրիշները իրենք զիրենք պէտք է պահեն ճիշդ այնպէս, ինչպէս մենք պիտի վարուէինք այս կամ այն իրավիճակին ժամանակ: Այնուամենայնիւ, այդպէս չէ: Ուրիշներէն նոյն պահուածքը սպասելը հաւասար է այն բանին, որ նախապէս դուք ձեզ տրամադրեցէք հիասթափութեան եւ յուսահատութեան: Տրամադրուեցէք այնպէս, որ իւրաքանչիւր մարդ նոյն բանը կ’ընէ իր ձեւով: Միւս անգամ դուք հոգեբանօրէն պատրաստ պիտի ըլլաք, իսկ շրջապատողներու սովորութիւնները ձեզի համար այլեւս անակնկալ պիտի չըլլան: Խելացի մարդիկ մշտապէս այդպէս կ’ընեն եւ իրենց չի զարմացներ ուրիշներուն պահուածքը:

*5. Անոնք կեդրոնացած են իրենք իրենց վրայ.* Փոխանակ անգամ մը եւս չարանաք մարդու հանդէպ, փորձեցէք կեդրոնանալ այն բանին վրայ, թէ դուք ինչու այդպէս կ’արձագանգէք:

Ջանացէք շօշափել սեփական ցաւոտ կէտերը: Ուրիշ անգամ պիտի կրնաք կանխատեսել, մեղմել կամ նոյնիսկ փոխել ձեր արձագանգը: Յիշեցէք. աւելի դիւրին է փոխել սեփական ընկալումը, վերաբերմունքը եւ պահուածքը, քան փոխել ոեւէ մէկը:

*6. Անոնք դադար կ’առնեն եւ խոր շունչ կը քաշեն.* որոշ մարդոց սովորութիւնները կրնան ձեզ հունէ հանել: Հաւանաբար ձեր գործընկերը կանոնաւոր կերպով չի կրնար ժամանակին կատարել պարտականութիւնները, կամ ալ դուք ծանօթ ունիք, որ սարսափելի կը ջղայնացնէ յիմար կատակներով: Հերթական ջղային բջիջը ծախսելու փոխարէն, կանգ առէք եւ խոր շունչ քաշեցէք: Ատիկա պիտի օգնէ հանգստանալու եւ պիտի կանխէ չափազանցուած յուզական հակազդեցութիւնները:

*7. Անոնք կը խօսին իրենց պէտք եղած բաներուն մասին.* Եթէ որոշ մարդիկ մշտապէս կը գրգռեն ձեզ, փորձեցէք այդ մասին հանգիստ խօսիլ անոնց հետ: Խուսափեցէք մեղադրական արտայայտութիւններէն: Օգտագործեցէք պահը եւ սպասեցէք պատասխանի:

*8. Անոնք կրնան հեռաւորութիւն պահպանել.* եթէ բոլոր տարբերակները ձախողած են, խելացի մարդիկ հմտօրէն հեռաւորութիւն կը պահպանեն անոնցմէ, որոնք իրենց համար հաճելի չեն: Ուղղակի գացէք ձեր ճանապարհով: Հնարաւոր է, որ ապագային դուք ցանկութիւն եւ հնարաւորութիւն ունենաք յարաբերութիւնները հարթելու:

## ԱՇԽԱՐՀԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՄԷՋ ՀԱՒԱՔԱԾ ՄԻՏՔԵՐ ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԷՆ

– Կեանքը ճանապարհ է, նպատակ եւ պարգեւ: Կեանքը սիրոյ պարն է: Ձեր առաքելութիւնը ծաղկիլն է: Գոյութիւն ունենալ՝ ատիկա մեծագոյն նուէր է աշխարհին: Ձեր կեանքը տիեզերքի պատմութիւնն է: Կեանքի հետ վարուեցէք իբրեւ տօն, քանի որ կեանքը ինքն իրմով արդէն արժէք է:

– Ինչ որ ցանած էք՝ այն ալ պիտի հնձէք: Դժբախտութիւնը ձեր ընտրութիւնն է: Աղքատութիւնը՝ մարդու ստեղծագործութիւնն է: Իսկ դառնութիւնը՝ տգիտութեան արդիւնք: Մեղադրելով՝ ուժ կը կորսնցնէք, իսկ փափաքելով՝ երջանկութիւնը կը ցրուէք: Աղքատ է ան, ով որ չի գիտակցիր ինքն իրեն: Աղքատ կը դառնայ ան, ով որ անտեղի կը ծախսէ ժամանակը: Մի՛ վերածէք կեանքը անբովանդակութեան: Թոյլ մի՛ տաք ամբոխին կործանել ձեր հոգին:

Եւ թող հարստութիւնը չըլլայ ձեր անէծքը:

– Մի՛ մեղադրէք դուք ձեզ: Մի համեմատէք եւ մի տարբերէք: Ամէն ինչի համար շնորհակալ եղէք: Ուրախացէք, քանզի ուրախութիւնը հրաշքներ կը գործէ: Սիրեցէք դուք ձեզ: Օրհնեցէք վտանգները, քանզի խիզախները երանութիւն կ’ունենան: Աղօթեցէք ուրախութեամբ եւ դժբախտութիւնը կը շրջանցէ ձեզ:

– Երջանիկ են սիրողները, երջանիկ են շնորհակալները: Երջանիկ են խաղաղութեան մէջ գտնուողները:

Երջանիկ են անոնք, որոնք դրախտը գտած են իրենց մէջ:

Երջանիկ են ուրախութիւն պարգեւողները եւ երջանիկ են պարգեւը ուրախութեամբ ընդունողները: Երջանիկ են իրենց առաքելութիւնը կատարողները: Երջանիկ են միասնութեան գիտակցողները: Երջանիկ են աշխարհի գեղեցկութիւնը տեսնողները: Երջանիկ են երջանկութիւն ընդունելու պատրաստները:

– Ձեր կեանքը՝ Աստուծոյ գանձարանի մեծագոյն գանձն է:

Իսկ Աստուած՝ մարդու սրտի գանձը: Ձեր ներսի հարստութիւնը անսպառ է, իսկ առատութիւնը ձեր շուրջը՝ անսահման: Աշխարհը բաւական հարուստ է, որպէսզի ձեզմէ իւրաքանչիւրը հարուստ ըլլայ: Այդ պատճառով, որքան շատ տաք, այդքան շատ կը ստանաք: Երանելի են իրենց մէջ գանձ գտածները:

– Ըմպեցէք կեանքի իւրաքանչիւր ակնթարթէն, քանզի չապրած կեանքը տխրութիւն կը ծնի: Կեանքի մռայլութիւնը՝ սրտի մռայլութենէն է: Երջանկութիւնը՝ արեւածագ է: Երանելի են լոյսին ձգտողները:

– Ապրեցէք պարզ: Մի վնասէք ուրիշին: Մի նախանձիք:

Թող կասկածները մաքրագերծեն այլ ոչ թէ տկարացնեն:

Նուիրեցէք կեանքը գեղեցիկին: Ստեղծագործեցէք յանուն արուեստի, այլ ոչ թէ՝ հանրածանօթ դառնալուն: Ձեւա փոխեցէք անցեալը՝ մոռնալով զայն: Աշխարհ բերէք նորը:

Մարմինը լեցուցէք սիրով: Դարձէք սիրոյ ուժը, քանզի սէրը կ’ողեշնչէ:

– Երջանիկը կը փոխէ շատերը: Դժբախտները կը մնան ստրուկ, քանզի երջանկութիւնը ազատութիւն կը սիրէ:

Ընկալեցէք երջանկութեան արուեստը: Բացուեցէք աշխար հին առջեւ եւ աշխարհը կը բացուի ձեր առջեւ:

## ՀՐԱՇՔ ՄԻՋՈՑ, ՈՐ ԿԸ ՀԱՆԳՍՏԱՑՆԷ ՈՂՆԱՅԱՐԻ ՑԱՒԸ

Ողնայարի մկանները ծանրաբեռնուածութենէ թօթափելու եւ ուժ ստանալու որոշ բաղադրատոմսեր յայտնի են շատերուն: Այդ բաղադրատոմսերը բացայայտած են մարզիկներն ու մարզիչները: Ուժերը վերականգնելու եւ ողնայարի ցաւը նուազեցնելու նոր բաղադրատոմս է նաեւ ընդամէնը 3 միրգերէ բաղկացած խառնուրդը: Որպէսզի օրը սկսիք ուժով, ձեզի անհրաժեշտ է 1 սալորաչիր, 5 ծիրանի չիր եւ 1 թուզի չիր: Այս չիրերը կը պարունակեն այնպիսի տարրեր, որոնք կը խթանեն միջողնային սկաւառակներու փափուկ հիւսուածքներուն վերականգնումը:

Մէկ ու կէս ամիս շարունակ այս ուտելիքներուն կանոնաւոր օգտագործումը կը բարելաւէ ողնայարի դիմադրողականութիւնը՝ առանց այլ միջամտութիւններու:

Այս բաղադրիչները առանձին այնքան ալ արդիւնաւէտ չեն ողնայարին համար, չնայած, որ բոլորն ալ չափազանց օգտակար են, այնուամենայնիւ, միախառնած՝ այս միրգերը առաւել հզօր են եւ դրական ազդեցութիւն կ’ունենան ձեր ինքնազգացումին վրայ:

## ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ Ե՞ՐԲ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՐԷ. ԿԱՐԵՒՈՐ ՆՇԱՆՆԵՐ

Մարդու մարմինը զարմանալի է, այնտեղ միաժամանակ տեղի կ’ունենան անթիւ հոլովոյթներ եւ, եթէ որեւէ բան կը խախտի, մենք անպայման կը զգանք: Սակայն մեզմէ շատեր ուշադրութիւն չեն դարձներ: Պէտք է յիշել, որ իւրաքանչիւր պարագայի աւելի լաւ է խնդիրը վերացնել ուղղակի սկիզբէն, քան յետոյ պայքարիլ բարդացումներու դէմ:

Ի՞նչ կը նշանակեն որոշ նախանշաններ.

Ջոր մորթ. Ձեր մարմինը ունի վիթամին E-ի պակաս: Անիկա լրացնելու համար ձեր սննդակարգին մէջ մտցուցէք ընկուզեղէն, իւղոտ ձուկ եւ բուսական իւղ:

Փխրուն մազեր եւ եղունգներ. Այս նշանները կը խօսին B խումբի վիթամիններու եւ քալսիումի պակասի մասին: Այս վիթամինները շատ են ցորենի եւ հացի մէջ:

Լինտերու արիւնահոսում. Այս պարագային մարմինը ունի վիթամին C-ի պակաս: Այս վիթամինը շատ է սոխի, միրգերու եւ կանաչեղէններու մէջ:

Վատ քուն եւ դիւրագրգռութիւն. Այս վիճակը կը խօսի մակնեզիումի եւ քալսիումի պակասի մասին: Այս տարրերը կան ծիրանաչիրի, սալորաչիրի եւ ճակնդեղի մէջ:

Ջղաձգումներ գիշերները. Ասիկա նոյնպէս կը նշանակէ մակնեզիումի եւ քալսիումի պակաս:

Աղի պակաս. Այս պարագային մարմնին մէջ բորբոքում յայտնուած է կամ գլուխ բարձրացուցած են բորբոքային հոլովոյթները:

Քաղցրի կարիք. Ամենայն հաւանականութեամբ ձեր մօտ ջղային հիւծուածութիւն է եւ դուք կլլուքոզի կարիք ունիք: Այդ պարագային աւելի լաւ է օգտագործել մեղր կամ դառն տուրմ, որպէսզի խնդիրներ չունենաք աղեստամոքսային համակարգի մէջ:

Անլի ուտելիքի ցանկութիւն. Այս նշանը կը խօսի կազերու կամ լեարդի հետ խնդիրներու մասին: Անլի սնունդը կ’օգնէ հանելու կազերը եւ կը հանգստացնէ ստամոքսը:

Սնունդը անլի կը թուի. Կարելի է ճնշախտ ունիք:

Արեւածաղիկ ուտելու ցանկութիւն. Ձեր մարմինը ունի հակաթոյներու կարիք:

Բադի մաշկ արմունկներուն վրայ. Այս նշանը վիթամին C-ի եւ A-ի պակասն է, ասոնք կարելի է լրացնել նարնջագոյն միրգերու եւ բանջարեղէնի՝ ստեպղինի, դդումի, լոլիկի, ծիրանի, ծիրանաչիրի շնորհիւ:

Թթու ուտելիքի ցանկութիւն. Մարմինը ինք կ’ուզէ այդ ուտելիքները, քանի որ անոր պէտք է լեարդի եւ լեղապարկի խթանում: Ձեր սննդակարգին մէջ աւելցուցէք կիտրոն, լոռամիրգ:

Դառն ուտելիքի ցանկութիւն. Դուք ունիք աղեստամոքսային համակարգի խնդիր: Այս պարագային պիտի օգնէ մարմնի փափուկ մաքրումը:

Կծու ուտելիքի ցանկութիւն. Կծու ուտելիքը կը խթանէ նիւթափոխանակութիւնը, սակայն զայն պէտք է օգտագործել քիչ եւ ոչ անօթի փորին:

Ծովային ուտելիքներու ցանկութիւն. Ամենայն հաւանականութեամբ ատիկա կը խօսի մարմնի մէջ եոտի պակասի մասին:

## ԼԵՍԹԸՐԸ ՀՌՉԱԿՈՒԵՑԱՒ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆԳԼԻԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ




*«Լեսթերը» պատմութեան մէջ առաջին անգամ հռչակուեց ֆուտբոլի Անգլիայի չեմպիոն: Իտալացի Կլաուդիո Ռանյերիի գլխաւորած թիմը չեմպիոն դարձաւ արդէն նախկին չեմպիոն Լոնտոնի «Ջելսիի» խելահեղ պայքարի շնորհիւ:*

*Գուս Հիդինկի գլխաւորած թիմը չեմպիոնական մրցավազքից դուրս թողեց Լոնտոնի «Տոտենհեմին» լոնտոնեան դերբիում խաղալով ոչ ոքի՝ 2:2:*

*Հանդիպման ընթացքում «Ջելսին» պարտւում էր 0:2 հաշուով, սակայն Գարի Կեյհիլի եւ Էդէն Ազարի գոլերի շնորհիւ հաւասարեցրեց հաշիւը, եւ առաջնութեան աւարտից երկու տուր առաջ «Տոտենհեմը» 7 միաւոր է զիջում առաջատար «Լեսթերին» (77 միաւոր), որի չեմպիոնութեան գործակիցն առաջնութեան մեկնարկից առաջ 5000 էր:*

*Ռանյերին էլ Յունաստանի հաւաքականում ձախողուելուց յետոյ էր անցած ամրանը գլխաւորել «Լեսթերը» եւ կարիերայի ընթացքում առաջին անգամ նուաճում է չեմպիոնական տիտղոս:*

*Խորհրդանշական է, որ վերջին տուրում նորընծայ չեմպիոն «Լեսթերը» Լոնտոնում կը հիւրընկալուի նախորդ չեմպիոն «Ջելսիին»: Նախավերջին տուրում «Լեսթերը» տանը կ՚ընդունի «Էվերտոնին»:*

## «ԵՈՒՎԵՆՏՈՒՍԸ» 5-ՐԴ ԱՆԳԱՄ ԱՆԸՆԴՄԷՋ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

*Իտալիայի առաջնութեան աւարտից երեք տուր առաջ Թուրինի «Եուվենտուսը» նուաճեց 32-րդ ախոյեանական տիտղոսը: Երկրորդ տեղում ընթացող «Նապոլին» 35-րդ տուրում 0:1 հաշուով պարտուեց «Ռոմային» եւ կորցրեց տեսական հնարաւորութիւնը հասնել թուրինեան ակումբին, որն ունի 85 միաւոր: «Նապոլին» վաստակել է 73 միաւոր: «Ռոման» 71 միաւորով երրորդ տեղում է: «Եուվենտուսը» 5-րդ տարին անընդմէջ է հռչակւում Իտալիայի ախոյեան:*

## ԿԻԵՒԻ «ԴԻՆԱՄՈՆ» ՊԱՇՏՊԱՆԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԽՈՅԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ

*Կիեւի «Դինամոն» ֆուտպոլի Ուկրաինայի առաջնութեան աւարտից 3 տուր առաջ ապահովել է ախոյեանի տիտղոսը:*

*23-րդ տուրում կիեւցիները տանը նուազագոյն հաշուով յաղթել են «Վորսկլային» եւ 7 միաւոր առաջ անցել երկրորդ տեղում գտնուող Դոնեցկի «Շախտյորից»: Առաջնութեան աւարտին մնում է 3 տուր, սակայն «Դինամոյի» մրցակիցներից մէկը կազմալուծուած Զապորոժյէի «Մետալուրգն» է, որին գրանցուելու է տեխնիկական պարտութիւն:*

*Սերգէյ Ռեբրովի թիմը պաշտպանեց տիտղոսը եւ ռեկորդային՝ 15-րդ անգամ հռչակուեց Ուկրաինայի ախոյեան:*

## «ՆԱՆՏԸ» ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Է ՅԱՅՏՆԵԼ ՄԻՇԵԼ ՏԷՐ-ԶԱՔԱՐԵԱՆԻՆ



*Ֆրանսական «Նանտը» պաշտօնապէս հաստատել է, որ թիմի գլխաւոր մարզիչ Միշէլ Տէր-Զաքարեանը այս մրցաշրջանի վերջում հեռանալու է զբաղեցրած պաշտօնից:*

*Ֆրանսական ակումբը 53-ամեայ մասնագէտին շնորհակալութիւն է յայտնել 4 տարուայ աշխատանքի համար եւ մաղթել յաջողութիւն:*

*Ֆրանսական մամուլում լուրեր են շրջանառւում, որ Հայաստանի հաւաքականի նախկին ֆուտպոլիստը ֆրանսական «Գենգամը» գլխաւորելու հիմնական թեկնածուն է: Միշէլ Տէր-Զաքարեանը 2012-ին էր վերադարձել «Նանտ», որը Ֆրանսայի առաջնութեան 35-րդ տուրից յետոյ 45 միաւորով 10-րդ տեղում է:*

**www.massispost.com**
**daily news updates**

## ՅՈՒՆԱՍՏԱՆՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԱԿԸ ՓՈԽԱՆՑԵՑ ՊՐԱԶԻԼԻԱՅԻՆ




*Աթէնքում տեղի է ունեցել Ռիօ-2016-ի օլիմպիական կրակի փոխանցումը Յունաստանից Պրազիլիային: Ապրիլի 21-ին Հին Օլիմպիայում մեկնարկած ջահի փոխանցավազքն աւարտուել է Աթէնքի «Պանաթինաիկոս» ստադիոնում, որտեղ անցկացուել են 1896թ. Օլիմպիական խաղերը:*

*Արարողութեանը մասնակցել են Յունաստանի նախագահ Պրոկոպիս Պաւլոպուլոսը, Ռիօ-2016-ի կազմկոմիտէի նախագահ Կարլոս Նուզմանը եւ Յունաստանի Ազգային օլիմպիական կոմիտէի նախագահ Սպիրոս Կապրալոսը:*

*31-րդ ամառային Օլիմպիական խաղերը տեղի կ՚ունենան Օգոստոսի 5-ից 21-ը:*

## ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ԿՈԼԸ ՅԱՂԹԱԿԱՆ ԷՐ




*Ֆուտպոլի հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի 8-րդ տուրում «Ռեալ Սոլթ Լէյքը» հիւրընկալել է «Հիւսթոն Դինամոյին» եւ կամային յաղթանակ է տարել Հայաստանի հաւաքականի յարձակուող Եուրա Մովսիսեանի կոլի շնորհիւ: Դաշտի տէրերը յաղթել են 2:1 հաշուով:*

*«Ռեալ Սոլթ Լէյքը» 8 խաղից յետոյ 17 միաւոր եւ երկրորդ տեղում է, սակայն առաջատար «Կոլորադոն» 17 միաւոր վաստակել է 9 խաղում:*

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԵԿԱՄՏԱԲԵՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԸ

*Forbes-ը հրապարակել է աշխարհի ամենաեկամտաբեր մարզական ակումբների ցուցակը, որը գլխաւորում է «Դալաս Կովբոյզ» ամերիկեան ֆուտպոլի թիմը: Երկրորդ տեղում է «Նիւ-Ինկլենդ Պետրիոտս» ամերիկեան ֆուտպոլի թիմի, իսկ լաւագոյն եռեակը եզրափակում է ֆուտպոլի Անգլիայի 20-ակի ախոյեան «Մանչեսթեր Յունայթեդը»:*

*Մադրիդի «Ռեալը» յայտնուել է չորրորդ տեղում, իսկ «Բարսելոնան» 14-րդն է:*

*Աշխարհի ամենաեկամտաբեր 20 ակումբները*

1. *«Դալաս Կովբոյզ» (ամերիկեան ֆուտպոլ) - տարեկան 270 միլիոն տոլար:*
2. *«Նիւ-Ինկլենդ Պետրիոտս» (ամերիկեան ֆուտպոլ) - 195 միլիոն:*
3. *«Մանչեսթեր Եունայթեդ» (ֆուտպոլ) - 190 մ.:*
4. *«Ռեալ» (ֆուտպոլ) -162 մ.:*
5. *«Լոս Անճելոս Լէյքերս» (պասքետպոլ) - 133 մ.:*
6. *«Մանչեսթեր Սիթի» (ֆուտպոլ) - 131 մ.:*
7. *«Ուաշինկթոն Ռեդսկինզ» (ամերիկեան ֆուտպոլ) - 125 մ.:*
8. *«Սան Ֆրանցիսքօ» (ամերիկեան ֆուտպոլ) - 124 մ.:*
9. *«Արսենալ» (ֆուտպոլ) - 122 մ.:*
10. *«Նիւ Եորք Ջետս» (ամերիկեան ֆուտպոլ) - 118 մ.:*
11. *«Լիվերպուլ» (ֆուտպոլ) - 115 մ.:*
12. *«Հիւսթոն Տեկսանս» (ամերիկեան ֆուտպոլ) - 115 մ.:*
13. *«Նիւ Եորք Նիքս» (պասկետպոլ) - 109 մ.:*
14. *«Բարսելոնա» (ֆուտպոլ) - 108 մ.:*
15. *«Նիւ Եորք Ջայենտս» (ամերիկեան ֆուտպոլ) - 105 մ.:*
16. *«Ինդիանապոլիս Կոլտս» (ամերիկեան ֆուտպոլ) - 90 մ.:*
17. *«Ֆիլադելֆիա Իգլզ» (ամերիկեան ֆուտպոլ) - 89 մ.:*
18. *«Չիկակօ Բեարզ» (ամերիկեան ֆուտպոլ) - 86 մ.:*
19. *«Յուվենտուս» (ֆուտպոլ) - 81 մ.:*
20. *«Կարոլինա Պանտերզ» (ամերիկեան ֆուտպոլ) - 78 մ.:*

# ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19**
Այս շաբաթ հաւանական է որ գործի բերումով կարճ ճամբորդութիւն մը կատարես, կարելի է որ այդ միջոցին քիչ մըն ալ հանգստանաս: Երեւոյթներէն մի խափուիր եւ զգոյշ եղիր ըսածներուդ վրայ: Օրէնքները մի խախտեր եւ լաւ օրինակ եղիր բոլորին:
Բախտաւոր թիւերդ են: 11,16,25,30,35

**ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20**
Շատ լուրջ հարց մը քեզ պիտի զգաստացնէ որ անդրադառնաս ըրած մեծ սխալիդ եւ փորձես շտկել զայն: Լաւագոյն միջոցդ ուրախ ապրելու՝ վարուելակերպդ բարելաւելն է: Հեռատեսիլի դիմաց շատ ժամանակ կ'անցնես առանց զգալու:
Բախտաւոր թիւերդ են: 7,15,26,31,32

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20**
Մեծ ծրագիր մը ունիս ամբողջացնելիք եւ կը խորհիս թէ այդ քու ըմբռնումէդ շատ մեծ է: Գիտցիր որ կարող ես իրականացնելու զայն եթէ քիչ մը լաւ սերտողութիւն կատարես նիւթին շուրջ: Նշանաւոր անձէ մը պիտի ճանչցուիս:
Բախտաւոր թիւերդ են: 17,21,25,29,33

**ԽԵՑԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22**
Կողակիցիդ նկատմամբ պաղ վերաբերմունք կը ցուցաբերես եւ կը նեղացնես զինք: Ամէն բանէ առաջ դուն քեզ կ'ապահովես եւ շուրջդ բնաւ չես նայիր: Քանի մը օրուայ ճամբորդութիւն մը որոշած ես եւ կ'ուզես առանձին ըլլալ այդ օրերուն:
Բախտաւոր թիւերդ են: 1,8,15,26,30

**ԱՌԻԾ Յուլիս 23-Օգոստոս 22**
Կեանքէն մեծ ակնկալութիւններ ունիս եւ կ'ուզես ամէն բան գլխաւորել: Արդար չես ըլլար երբ հարցը կայանայ նիւթականին շուրջ: Արժէքաւոր անձ մըն ես, ինքզինքիդ հարցը լաւ գիտցիր եւ մի խափուիր սուտ խօսքերէ:
Բախտաւոր թիւերդ են: 9,11,22,25,28

**ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
Նպատակիդ հասնելու համար ամէն բանի կը դիմես: Շատ յատկանշական եւ գեղեցիկ պատահար մը ամբողջ կեանքդ պիտի փոխէ: Առիթի մը ընթացքին, նոր բարեկամներ պիտի շինես: Ֆիզիքական դիրքդ չի ներեր որ արշաւներու մասնակցիս:
Բախտաւոր թիւերդ են: 5,13,24,29,34

**ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Միշտ պարտականութեանդ վրայ հաստատ ես եւ հաւատարմօրէն առաջնորդներուդ կը հետեւիս: Կոշտ եւ անհոգ մարդոցմէ հեռու կը մնաս եւ կեանքդ ուղիղ կերպով կը սիրես ապրիլ: Խօսքերդ արտասանելէ առաջ լաւ ստուգէ որ չսխալիս:
Բախտաւոր թիւերդ են: 6,12,27,31,33

**ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Ծանուցում մը ուշադրութիւնդ պիտի գրաւէ եւ միտքդ զբաղեցնէ, մի խորհիր որ այդ օգտակար է քեզի: Մարդոց շուտով մի հակադարձեր առանց հանդարտօրէն լսելու զանոնք: Դատական հարց մը քիչ մը նեղութեան պիտի մատնէ քեզ, բայց պիտի յաջողիս:
Բախտաւոր թիւերդ են: 15,20,25,30,32

**ԱՂԵՂՆԱՒՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
Աղմկոտ եւ խճողուած տեղերէ կ'ուզես հեռու մնալ եւ խուսափելով առանձնանաս: Ուտելիքներուդ ուշադրութիւն դարձնելու ես եւ զգուշանաս վնասակար ճաշերէ: Առողջութիւնդ լաւ պահելը շատ կարեւոր է: Կարեւոր լուր մը պիտի ստանաս:
Բախտաւոր թիւերդ են: 8,11,24,28,29

**ԱՅԾԵՂՋԻՒՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19**
Կատարած գործերդ յաճախ ստուգումի պէտք կ'ունենան որովհետեւ հապճեպ եւ անզգոյշ ես: Աղմկոտ վայրեր չես սիրեր եւ միշտ այդ պատճառով կը վիճիս կողակիցիդ հետ: Փորձէ հասկնալ դիմացինիդ տեսակէտները եւ լսել զիրենք:
Բախտաւոր թիւերդ են: 10,16,22,31,35

**ՋՐՀՈՍ Յունուար 20-Փետրուար 18**
Առանձին մնալու համար շատ բաներ կը փորձես, որովհետեւ կը զգաս թէ առանձնութեան մէջ դուն քեզ հանգիստ կ'զգաս: Պէտք չ'ունիս տարբեր միջոցներով ստեղ յայտնելու շուրջիններուդ՝ կը բաւէ որ անկեղծ ըլլաս:
Բախտաւոր թիւերդ են: 1,17,23,24,34

**ՁՈՒԿ Փետրուար 19-մարտ 20**
Գործիդ մէջ փորձէ լաւագոյնդ ընել եթէ նոյնիսկ պարտաւոր չես մէկու մը հաշիւ տալ: Ժամադրութիւններդ յարգելու մէջ շատ թերի ես եւ նեղութիւն կը պատճառես ընտանիքիդ անդամներուն: Փորձէ աւելի ճշդապահ ըլլալ:
Բախտաւոր թիւերդ են: 8,15,27,29,33

# ՋԱՍՏՈՒԱԾ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐՈՒՆ

*Շարունակուածէջ 6-էն*

*գրէր.- «Մենք դժբախտ ազգի մը զաւակներն ենք, եւ յաճախ մենք ենք որ այսպէս կամ այնպէս պատճառ կ'ըլլանք բարձրացնելու մեր ազգային դժբախտութեան ջերմաչափը: Եւ մենք սովոր ենք ամենուին չընդունիլ ոեւէ չափով պատասխանատուութիւն, այլ կը փնտռենք զայն ուրիշներուն վրայ, իսկ պատասխանատուութիւնը շատ ծանր է, շատ անհաճելի բան մը. ո՞վ կը յանդգնի ստանձնել զայն: Այս պատճառաւ սխալներ, չարիքներ կը գործուին, պատասխանատուութիւնը կը մնայ առկախ, եւ մենք առանց ճանչնալու զայն, կը շարունակենք մեր գիտցածը, եւ կը դնենք մեղքը մեղքի վրայ, ամէնքս ալ իրարու աչքին մեղաւոր ենք, պատասխանատու ենք, բայց մենք անձնապէս, առանձնապէս մեր աչքին առջեւ անմեղ ենք ու անպատասխանատու եւ մեր խիղճերը չա՜տ հանդարտ են...». եւ կ'եզրակացնէր.*

*«Գնա՛ ուրեմն եւ մի՛ մոռնար Աւետարանի այսօրուան դասը.- Տո՛ւր հաշիւը:*

*Տո՛ւր հաշիւդ՝ խղճիդ, գիտակցութեանդ առջեւ: Ո՞ւր ես, ի՞նչ կ'ընես, ի՞նչ պիտի ընես:*

*Տո՛ւր հաշիւդ՝ հայրենի տանդ առջեւ, տե՛ս թէ որչափ հաւատարիմ ես մնացեր ատոր աւանդութիւններուն:*

*Տո՛ւր հաշիւդ ազգային խղճի առջեւ, եւ տե՛ս թէ ոեւէ չափով պատասխանատուութիւն մը կը զգաս ազգիդ դժբախտութիւններուն ծանրութեան մէջ»:*

*Այս առումով Աստուած Յիսուս Քրիստոսի միջոցաւ յանձնարարեց՝ «Տո՛ւք զկայսերն կայսեր եւ Աստծոյնն Աստուծոյ». այսինքն՝ քաղաքացիական պարտականութիւնդ կատարէ, հայրենիքդ պաշտպանէ, հողիդ տէր կանգնիր՝ կատարելով երկրաբնակի պարտաւորութիւններդ: Տուր Աստուծոյ իր բաժինը՝ հոգեւոր եւ երկնային պարտականութիւնդ: Աստուած չթելադրեց գլուխ ծռել թշնամիին, ծունկ չոքել ոսոխին, հողդ լքել եկուորին: Ան երբեք չըսաւ խաֆիէներ մեծցուր եւ «արիւնոտ թթխմոր»ով սնանիր ով հայ մարդ:*

*Ահա թէ ինչու յոյժ անհաճ տրտնջանք մըն է «ո՞ւր էիր Աստուած» շատերու կողմէ կլլուած ասոյթը:*

---

# «ՊԱՊԻԿԸ ԿԱՐԴԱԼ ՉԻ ԳԻՏԵՐ»

*Շարունակուածէջ 8-էն*

*կանգնելու մեր լեզուին, հայ գիրքին ու հայ գրողին:*

*Գէորգ Պետիկեան իր խօսքը աւարտեց ըսելով,- Բոլորդ ալ եկած էք հաստատելու, թէ դուք էք հայերէնը եւ հայերէնն ալ իր կարգին հայութիւնն է»:*

*Ձեռնարկը վերջ գտաւ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի օրհնութեան խօսքով: Սրբազան հայրը շնորհաւորեց Պետիկեանը իր նոր ստեղծագործութեան առթիւ, քաջառողջութիւն ու յարատեւութիւն մաղթելով իր բեղուն գրիչին:*

*Երախտագիտական խօսք բազմավաստակ գրագէտ, դաստիարակ Գէորգ Պետիկեանի մաղթելով անոր դալար գրիչ եւ յարաճուն վերելք: Կանաչ ճանապարհ եւ նորանոր նուաճումներ սիրելի կարդալ չգիտցող Պապիկ:*


## Ն.Ս.Մ.Մ ԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Կը Կազմակերպէ

## ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Տարիքային Բոլոր Խումբերու Համար

Ղեկավարութեամբ՝

Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող Եւ Հեռուստալրագրող

## ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ

Փորձերը տեղի կ'ունենան ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave. Pasadena .ca 91104

Արձանագրութեան Համար Դիմել՝

Տիկ. Արմինէ Լաչինեանին Հեռ. 626-372-4662

Պր. Յարութ Տէրվիշօղլեանին Հեռ. 323-351-8001




## ՁԻՒՆԱԹՈՅՐ ՁԻՒՆԻԿԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*Դժբախտաբար մենք ապագայ չու-նինք հոս, Հայաստանի մէջ:*

*- Ջէ՜ պարոն, ներեցէք մա-յեստրօ, մենք իրաւէն յուսախաբ ենք, ամուսնու խօսքն է շարունա-կում կինը, -այս օրերուս մենք կը սպասենք, որ դրամ գայ Ամերիկա-յէն, մօրաքոյրս, որպէսզի եւրոպա-կան երկիր մը տեղափոխուինք: Գիտէք արդէն, որ Ամերիկան հիմա սուրիական փասփորթով մէկու մը չընդունիր:*

*Որեւէ առարկութիւն չվերց-նող տոնով եւս մի տաս րոպէ շարունակեցին երիտասարդները իրենց դժգոհութիւնն յայտնել ինձ լաւագոյնս ծանօթ հայաստանեան կեանքից, որից յետոյ, միմեանց յաջողութիւն մաղթելով սիրով բա-ժանուեցինք:*

*- Այսօր արդէն Կիրակի է: Ես հրաւիրուած եմ մի բարեկամի տղայի հարսանիքին: Եկեղեցւոյ արարողութիւնը Կոնդի Ս. Յով-հաննէս եկեղեցում է, այն էլ՝ օրուայ ամենաշոգ ժամին, ժամը 2:30-ին: Խնջոյքն էլ ժամը 7-ին:*

*Մինչ եկեղեցի մտնելը որոշե-ցի մէկ սիգարետ փչացնել : Անկիւ-նում կանգնած ծխում եմ, մէկ էլ տեսնեմ յուշիկ, դանդաղ քայլերով ինձ է մօտենում գեղեցկադէմ, սպիտակից էլ սպիտակ մաշկի գոյ-նով, սպիտակ շրջազգեստով մի աղջնակ.*

*- Ես ձեզ անմիջապէս ճանաչեցի քեռի Ջան, դուք երեկուայ այն մարդն էք, որ մայրիկիս կոպտեցիք, -ասաց աղջիկը առանց նեկայանալու:*

*- Ո՞րտեղ, ե՞րբ-, մենք ծանօթ չենք:*

*- Երեկ երեկոյեան Արմենիայի առջեւի կաֆէում-, յիշեցի՞ք:*

*- Ախ հա՜, ուրեմն քո մայրն էր ինձ առաջարկութիւն անողը, այդպէ՞ս է, զսպելով կատաղութիւնս ասացի ես:*

*- Այո, հենց այդպէս: Նա ծանր հիւանդ է, ընդամէնը մի 5-6 ամս-ուայ կեանք ունի: Ես պէտք է նրա դեղերի համար փող ճարեմ, իսկ դեղերն էլ շատ թանկ են: Ես թողել եմ դպրոցը եւ, եւ...*

*- Էլ եւ մեւ չկայ աղջիկս, ի՞նչպէս է անունդ աղջիկս,- արդէն մեղմացած ասացի ես:*

*- Ջինիկ է անունս, Ջինիկ.*

*- Ի՜նչ գեղեցիկ անուն է, դու այստեղ ինձ սպասիր, ես մտնեմ եկեղեցի, արարողութեանը մասնակ-ցելուց յետոյ ես կը միանամ քեզ, եղա՞ւ աղջիկս:*

*Ի՞նչ հարսանիք, ի՞նչ պսակ-մսակ, խելքս-միտքս ձիւնաթոյր(ձիւ-նի պէս ճերմակ) Ջինիկի վրայ է: Բաւական սիրողական արարողու-թիւնը չ՚աւարտած, դուրս ելայ եկեղեցուց:*

*- Հը՜, երկար սպասեցրի՞, կը ներես աղջիկս, Ջինիկին մօտենա-լուն պէս հարցրի նրան, -դէ, հիմա լսում եմ քեզ: Վստահ եմ, գիտես թէ մայրիկդ ինչ էր ասել ինձ:*

*- Գիտեմ, իհարկէ գիտեմ, նա ճիշդ է ասել:*

*-Ինչպէ՞ս, սարսափահար եղած բացականչեցի, այսինքն դու մարմ-նավաճառ ես, այո՛.*

*- Այո՜, այո՜, շուտով տասնը-հինգ կը լինեմ: Բայց ես ձեր իմացած մարմնավաճառներից չեմ: Ես միայն տուրիստների հետ եմ հանդիպում, այն էլ տարիքով մարդ-կանց հետ, որոնք սովորաբար խղճում են ինձ եւ դրամ տալուց յետոյ ինձ բաց են թողնում:*

*- Ուզում ես ասել, թէ դու անմեղ ես այո՞-, այսինքն օրիորդ.*

*- Ո՜չ-, իհարկէ ո՛չ-, բայց ինձ համար դա կարեւոր չէ, ես արդէն անտարբեր եմ այդ ամէնի նկատմամբ: Ինձ համար կարեւորը մայրիկիս համար դեղեր ապահո-վելն է, ինչ ճանապարհով ուզում է լինի:*

*- Ինչ է ձեր տանը մայրիկից բացի ուրիշ մարդ չկա՞յ.*

*- Ո՛չ, չկայ, հայրիկս տանից գնաց Ռուսաստան, երբ ես վեց տարեկան էի: Առաջին տարիները դրամ էր ուղարկում: Յետոյ դադա-րեցրեց: Որոշ ժամանակ անց իմա-ցանք, որ նոր ընտանիք է կազմել:*

*Մի քանի վայրկեան կարկամել մնացել էի, չգիտէի անելիքս: Փերու նման այս գեղեցկուհին շատ այրերի համար երանելի սիրուհի կարող էր լինել, եթէ իհարկէ չէր, իսկ հիմա, աչքերն ուղղած ինձ սպասում էր իմ որոշմանը.*

*- Վստահ եմ Ջինիկ Ջան, հիմա դու անօթի կը լինես, արի քեզ տանեմ մի լաւ ճաշարան, միասին կը ճաշենք, յետոյ քեզ կը ճանապարհեմ, հա՜, դու ո՞րտեղ ես ապրում:*

*- Էրեբունի թաղամասում: Էրեբունի թանգարանը գիտէ՞ք, հենց դրա կողքի փողոցում: Բայց կը ներէք, ես շատ ժամանակ չունեմ, պիտի ուտելիք-բան հասցնեմ տուն, իսկ երեկոյեան Արմենիա, գուցէ թէ ձեզ նման մի բարի տուրիստ հան-դիպի: Այսպիսին է իմ աշխատան-քը: Արդէն երրորդ տարին է: Սովո-րական օրերին հիւրանոցնե՜ր, կի-րակի օրերին եկեղեցի:*

*- Լաւ աղջիկս-, լաւ, ահա, վերցրու այս դրամը եւ մայրիկիդ համար անհրաժեշտ դեղերը գնիր, իսկ ինձ ոչինչ պէտք չէ:*

*- Մայրիկս երեկ, ամբողջ գի-շեր լալիս էր ձեր կողմից իրեն այդպէս վիրաւորելու համար: Բայց տեսէք, բախտը մեզ իրար մօտ բերեց, բայց ինչո՞ւ էք այսքան դրամ տալիս եւ ոչինչ չէ՞ք պահան-ջում դրա դիմաց, Տարօրինակ է:*

*- Հանգիստ գնայ: Գնայ աղ-ջիկս: Աշխատիր մի լաւ աշխատանք գտնել, որպէսզի մաքրուես: Գալ տարի ես քեզ կը գտնեմ:*

*- Շնորհակալ եմ, շնորհակալ եմ հայրի՜կ, իսկապէ՞ս դուք ոչինչ չէք ուզում ինձնից, ձեռքը թափ տալով օդում արագօրէն հեռացաւ Ջինիկը:*

*- Ոչի՜նչ աղջիկս, ոչինչ Ջինաթոյր Ջինիկ:*

*- Իսկապէս էլ յաջորդ տարի ես փնտրեցի Ջինիկին: Էրեբունի թան-գարանի առջեւի հրապարակի ան-կիւնի քարին նստած ծերունին պատ-մեց, որ Ջինիկին բոլոր թաղեցիք գիտեն.*

*- Ժամանակին շատ լաւ երե-խայ էր,- ասաց նա, յետոյ փողոց-ներն ընկաւ: Մայրը մի քանի ամիս առաջ մահացաւ, իսկ իրեն էլ հայրը տարաւ Ռուսաստան: Լաւ էր, մեր թաղը մաքրուեց...:*

### ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԼՈՒՍԱԾԻՆ (ՇԽՐՏՄԵԱՆ) ՀԱՆՆԷՆԵԱՆի մահուան տխուր առթիւ Սահակեան Վարժարանի Սանուց Միութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:*

*Առ այդ փոխան ծաղկեպսակի $100 կը նուիրէ «Մասիս»ին:*

## «ԳԱՐՈՒՆ ա, ԾԱՂԻԿ Է ԱՐԵԼ«...

*Շարունակուած էջ 15-էն*

*նած իմաստութիւնը, քանդեցին նրանց տաճարները, որ Արմին-Հայը չփառաբանէր նրանց սքան-չանքը: Արմին-Հայը իր հետ ան-մահութիւն տարաւ հին աստուած-ներին, նրանց փառաբանման ծնուն-դի խրախճանքը տօնախմբում Միհ-րի տաճարում: Հռովմի կայսրերն էին նաեւ դաւանել Միհրի ուս-մունքը, նրա ծնունդը տօնել ձմռան արեւադարձին՝ Դեկտեմբերի քսան-հինգին: Բազում դարեր յետոյ, հռովմէացիք այն համարեցին իրենց նոր հաւատքի Վարդապետի ծննդեան օր: Զուգադիպութի՞ւն, թէ՞ իրենց հին հաւատքի յուշերի յաւերժացում:*

*Հայկական լեռնաշխարհի ան-հաս գմբէթի ճակատն է ընդերքի խռովքից պատռուած, խորը վիհեր են այնտեղ: Ոչ ոք չի յանդգնել այդտեղից բարձրանալ նրա գա-գաթ: Ասում են, թէ չարքեր են այնտեղ եւ թէ հայոց Հայկազուն արքայ Արտաւազդին շղթայակապ գամել են ժայռին: Հայկազուն Արտաշէս անուշ արքան էր անիծել որդուն՝*

*«Թէ դու ձի հեծնես որսի գնաս,*
*Ազատն ի վեր դէպ Մասիս,*
*Այնտեղ մնաս լոյս չտեսնես»:*

*Արտաւազդը հօրը թաղման արարողութեան ժամանակ կանչել էր՝*

*«Երբ դու գնացիր ամբողջ երկիրը քեզ հետ տարար,*
*Ես այս աւերակաց վրայ ո՞ւմ թագաւորեմ»:*

*«Գարուն ա, ծաղիկ է արել», իրենց ցեղի աստուածացած հերոս առաջնորդների փառաբանման ոգով արբեցած պարմաններ, քան-դել էին փշալարերը, ճախրել Երաս-տի ջրերի վրայով, մտել Արարատի վիհեր, ձնծաղիկ քաղելու համար բարձրացել Արարատի լանջեր, այն ընծայելու համար Վահագնի ծննդեան տօնին: Վիհում հանդի-պել էին ժայռին շղթայուած Ար-տաւազդ արքային, փշրել էին նրա ժանգած շղթաները, ազատ արձա-կել:*

*Գառնի փլած ամրոցի առաջ տիեզերքը խորհրդանշող Միհր արեւ աստուծոյ սիւնազարդ մեհեանն է խրոխտ կանգնած, դիմացը՝ որ-սորդութեան հմայքով չափչտակ-ուած Խոսրով Կոտակ արքայի որ-սատեղի լայնատարած անտառն է: Ընդերքի խռովք փլել էր տաճա-րը: Հայ քարագործ վարպետները, տաճարի վերականգման ճարտա-րապետի հետ տեղաճշտել էին փլած տաճարի բեկորները, կոթողների փոխարէն նորերը տաշել եւ նոյն վեհութեամբ յաղթ կանգնեցրել: Ար-մին-Հայերի լոյսի փառաբանման Միհր արեւ աստուծոյ միակ կանգուն մեհեանն է այն:*

*«Գարուն ա, ծաղիկ է արել», «Աստուածամարդ Նահապետ» Հայ-կի, հայկազուն արքաների, հին աստուածների ոգու խորհուրդը իրենց սրտերում հայոց պարման-ներ, Արարատի վիհից Արտաւազդ արքային Միհրի մեհեան էին առաջ-նորդել: Նրա հրապարակում հա-զար-հազար Արմին հայեր տօնա-կան ցնծութիւն էին շեփորում, թմկահարն էր ուժգին զարկում, ծիրանի փողերն էին թունդ հնչում: Շուրջ պարի շարքերն էին լոյսի ճառագայթներին յենած պար բռնել: Արքան էր բարձրացել մեհեան, քրմուհիներն հեթանոսական տա-ղերով էին դիմաւորել նրան: Ատ-րուշանի մոխիրն էր խառնել, հա-զար-հազար տարիների Միհրի ան-շէջ կրակ վերցրել, երկինք նետել, որ հայոց աշխարհում կրակի ու լոյսի հրավառութիւն լինէր:*

*«Գարուն ա, ծաղիկ է արել», Վահագնի ծնունդն էր: Տաճարի աստիճաններից իջնում էին արե-գակունք ակներով, Միհրի արեւա-հուր վարսերով, կրակ պատմուճա-նով Վահագնը, եղէգնեայ ջահը վեր պարզած Արտաւազդը, հայոց մայր ոստանի Արմէն քուրմը: Բամբեր էին որոտում, ծիրանի փողեր, փան-դիռներ հնչում, հազար-հազար ար-միններ Վահագնի ծնունդի երգն էին թնդում: Մեհեանի աստիճան-ներին, շարան-շարան արեւալոյս քրմուհիները Արմինայի աստուած-ներին ձօնուած տաղերն էին հնչում, Արտաւազդն էր եղէգնեայ ջահի կրակալոյսը հոսում տաճարի հրա-պարակի Արմին-հայերի սրտերին: Հայոց հին աստուածները Արարա-տի գագաթից բուռ-բուռ ձիւն էին տեղում տաճարի հրապարակ: Ար-մին հայերը, լայն շրջանակներ կազմած, հեթանոս նախնիների պա-րերն էին բռնել: Սեղմել էին չար-քերի բոլորակը, Վահագնին ու Արտաւազդին գրկել, ձեռքերի վրայ վերեւ բարձրացրել, որ նորէն բա-րեպաշտութիւն, միասնութիւն հո-սէր հայոց սրտերին, հայոց աշ-խարհին:*

*«Գարուն ա» Հայոց մայր ոստանի փողոցներ էին ելել հա-զար-հազար Արմին-Հայեր, խնդում, ժպտում, ողջունում իրար: «Բամբ Որոտան» քայլերգով Արտաւազ-դին առաջնորդել Արմին-Հայաս-տան երկրի մայր ոստանի «Պա-լատ», որ նորէն հայոց աշխարհին թագաւորէր հայկազուն արտաշէ-սեանների տոհմի զարմից արքան:*

*Այո, մի նոր գարնան օր, Հայկի զարմից՝ «Արա»յի որդի մի Արմին, բազմելու է «Հայոց Գա-հին» երկիրը կառավարելու իրենց հին աստուածների բարեպաշտու-թեամբ, ճշմարտութեամբ, իմաս-տութեամբ, արդարամտութեամբ: ԱՅՈ...:*


### ՍԱՀԱԿԵԱՆԻ ՕՐ

Սահակեան Վարժարանի Սանուց Միութեան կազմակերպութեամբ աւանդութիւն դարձած «Սահակեանի Օր»ուան ընկերային հաւաքը տեղի պիտի ունենայ Կիրակի, 15 Մայիս, 2016, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Փասատինայի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, 1060 North Allen Avenue, Pasadena CA 91104:
Կը խնդրուի յարգել Սահակեանցիի ժամադրութիւնը:
Ճոխ հիւրասիրութիւն, անակնկալներ...

Մուտքը ազատ

Մասիս Շաբաթաթերթ

35 ԱՄԵԱԿ

Կազմակերպութեամբ՝ «Մասիս»-ի Օժանդակ Մարմինի

Մասիս Շաբաթաթերթի 35րդ Ամեակի

## ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

**Շաբաթ, 4 Յունիս, 2016**

Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ
ԼԻՒԴՈՎԻԿԱ ԵՒ ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ ՍՐԱՀ
117 S. Louise St., Glendale, CA 91205

Երեկոն կը Խանդավառէ
ՎԱՀԷ ՅԱԿՈԲԵԱՆ
եւ իր Նուագախումբը

Տոմսերու համար հեռաձայնել 626•755•4773

Մուտքի Նուէր՝ $75.00


